



ՍԴՅԿ Յայտարարությունը՝ Հայ-Թուրքական Արձանագրությունները Չեղեակ Յայտարարելու Որոշման Առթիվ

Սոցիալ Դեմոկրատ Յնչակեան Կուսակցության Կենտրոնական Վարչությունը իր գոհունակությունն է յայտնում հայ-թուրքական յարաբերությունների «կարգավորման» մասին արձանագրությունը չեղարկելու Յայտարարության հանրապետության իշխանությունների որոշման կապակցությամբ:

Յնչակեան Կուսակցությունն առաջին իսկ օրից վճռական դեմ է արտայայտել նման արձանագրությունների վաւերացմանը՝ հաշուի առնելով Թուրքիայի պետական-քաղաքական շրջանակների վերաբերմունքը Յայտարարության արձանագրության եւ Արցախի խնդրի կարգավորման հարցերում:

Մենք համոզուած ենք, որ Յայտարարության հանրապետության կենսական շահերից է բխում բաց սահմաններն ու կանխատեսելի հարեւանները, սակայն պաշտօնական Անկարայի ժխտողական պահուածքն ու տարիների հակահայ գործունեությունը եւս մէկ անգամ ապացուցում է այն առանց այդ էլ ակնառու փաստը, որ Թուրքիայի հետ յարաբերությունների կարգավորման բանալին այդ երկրի քաղաքական վերնախաւի՝ Յայտարարութեան եւ հայութեան նկատմամբ իրենց ունեցած ատելութեան աստիճանի հասնող վերաբերմունքի արմատական փոփոխութիւնն է:

Այս փաստաթղթի՝ Թուրքիայի կողմից անտեսելու եւ այն հետագայում Արցախի խնդրում Յայտարարութեան վրայ իբրեւ ճնշում գործադրելու փորձերը դրա վառ ապացոյցն են: Վստահ ենք, որ հայ-թուրքական յարաբերությունների կարգավորման ցանկացած փաստաթուղթ պէտք է դրուի աւելի լայն քննարկման հաշուի առնելով թէ՛ Յայտարարութեան, եւ թէ՛ Սփիւռքի կազմակերպուած կառոյցների մօտեցումներն ու դիրքորոշումները:

Սոցիալ Դեմոկրատ Յնչակեան Կուսակցության Կենտրոնական Վարչությունը նաեւ համոզմունք է յայտնում, որ մենք կանխատեսելի հարեւան կարող ենք ունենալ միայն եւ միայն այն պարագայում, երբ Թուրքիան պաշտօնապէս կճանաչի Յայտարարության արձանագրության փաստը, կառեւտուի պատմութեան հետ եւ կղաղարի Արցախի հիմնախնդրի հարցում հանդէս գալ պաշտօնական Բաքվի փաստաբանի դիրքերից:

Յնչակեան Կուսակցությունը շարունակելու է իր աշխատանքը Թուրքիայի առաջադէմ շրջանակների հետ Յայտարարութեան հնչեղութեան համար, ինչպէս նաեւ թուրքական հանրութեանն իրենց իսկ պատմութեան հետ ծանօթացնելու համար:

ՍԴՅԿ Կենտրոնական վարչութիւն
02.03.2018 Ք. Երեւան

Ամերիկայի Դեսպան. «Իշխանութեան Այսպիսի Չարաշահումը Կը Մնայ Հայաստանի Անենամեծ Մարտահրաւերը»

Հայկական խորհրդարանական պատուիրակութիւն մը, գլխաւորութեամբ Ազգային Ժողովի փոխնախագահ Արփինէ Յովհաննիսեանի կ'այցելէ Միացեալ Նահանգներ: Պատուիրակութեան կ'ընկերակցի Հայաստանի մէջ Միացեալ Նահանգներու արտակարգ եւ լրագորդեսպան Ռիչարտ Միլս:

Այս առթիւ «Ժամանակ» թերթին տրուած հարցազրոյցի մը ընթացքին, դեսպանը անդրադարձած է Հայ-Ամերիկեան յարաբերութիւններուն եւ իր կառավարութեան առաջնահերթութիւններուն:

«Հիմնական առաջնահերթութիւններէն մէկը, որ ես հռչակեցի Հայաստանի ժամանելէ յետոյ, աջակցիլն էր Հայաստանի մէջ այն մարդոց, որոնք կը փորձեն պայքարիլ փտածութեան դէմ: Դեսպանատունը տարբեր մեխանիզմներուն աջակցութեամբ կ'աշխատանքներու իրականացման համար: Անոնցմէ են, այո, Ֆինանսաւորել քաղաքացիական հասարակութեան այն խումբերը, որոնք կ'աշխատին այս խնդրի վրայ: Մենք նաեւ կը մարզենք, կը սորվեցնենք լրագործներուն հետաքննել կաշառակե-



Հայաստանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Ռիչարտ Միլս

րութեան գործարքները, կարգաւորամատնային հաշիւները եւ հետեւիլ դրամական հոսքերուն: Մեր գործունեութեան միւս ուղղութիւնը աշխատանքն էր կառավարութեան այն պաշտօնեաներուն հետ, որոնք լծուած էին կաշառակերութեան դէմ պայքարի գործին եւ կը ցան-

Շար.ը էջ 5

Արմէն Սարգսեանը Ընտրուեցաւ Հայաստանի Հանրապետութեան Նախագահ



Հայաստանի նորընտիր նախագահ Արմէն Սարգսեան

90 կողմ 10-ը դէմ ձայներու յարաբերակցութեամբ խորհրդարանը Հայաստանի 4-րդ նախագահ ընտրեց Մեծ Բրիտանիոյ մէջ Հայաստանի դեսպան Արմէն Սարգսեանը:

Հայաստանի 3-րդ Հանրապետութեան պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով Հայաստանի նախագահը ընտրուեցաւ ոչ թէ ժողովուրդի, այլ խորհրդարանի կողմէ:

Քուէարկութեան արդիւնքներու հրատարակումէն ետք Հայաստանի 4-րդ նախագահ ընտրուած Արմէն Սարգսեանը կարճ ելոյթ մը ունեցաւ՝ խոստանալով իր ողջ եռանդն ու փորձառութիւնը ներդնել Հայաստանի ժողովուրդին ծառայելու համար:

«Ուզում եմ շնորհակալութիւն յայտնել բոլոր կողմ քուէարկողներին եւ բոլոր դէմ քուէարկողներին: Ինչ վերաբերում է ինձ, ապա իմ երկար տարիների գիտելիքը, երկար տարիների փորձառութիւնը եւ ողջ եռանդը կը ներդնեմ Հայաստանի Հանրապետութեան նախագահի պարտականութիւնները լիովին կատարելու եւ լիովին ծառայելու Հայաստանի Հանրապետութեանը, հանրապետութեան քաղաքացիներին եւ մեր ողջ ժողովրդին: Իհարկէ ակնկալում եմ ձեր աջակցութիւնը եւ մասնակցութիւնը, ինչպէս նաեւ մեր բոլոր քաղաքացիների աջակցութիւնը եւ մասնակցութիւնը մեր ապագայ կարեւոր յաղթանակներին մեր Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիների եւ մեր ժողովրդին՝ Արցախ, Հայաստան եւ Սփիւռք», - ըսաւ Արմէն Սարգսեանը:

Նորընտիր նախագահը իր պաշտօնը պիտի ստանձնէ Ապրիլ 9-ին, Ազգային ժողովի յատուկ նիստի ընթացքին, երբ կ'աւարտի գործող նախագահ Սերժ Սարգսեանի լրագործութիւնները:

Շար.ը էջ 6

Փառաշուք Համերգով Նշուեցաւ Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան Պանծալի 100-Ամեակը



Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան 100-ամեակի հանդիսութիւնը Լոս Անճելըսի մէջ

Դար մը հարուստ պատմութիւն ունեցող Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութիւնը (A.M.A.A.) Կիրակի, Մարտ 4, 2018ին, շքեղ համերգով մը նշեց իր հիմնադրութեան 100-ամեակը, Փասատինայի Ամպասատոր հանդիսարահին մէջ:

Ներկայ էին Հարաւային Գալիֆորնիոյ Հայ Համայնքի կրօնական, քաղաքական, մշակութային, կրթական եւ ընկերային կազմակերպութեանց, Լոս Անճելըսի ու Կլենտէյլի քաղաքապետութեանց Հայ

պատասխանատուներն ու հայ եւ օտար երաժշտասէր խումբերն ու հասարակութիւն մը:

«Հաւատք եւ Մէր» վերտառութիւնը կրող սոյն համերգէն առաջ շնորհալի երաժշտագիտուհի Տօրիա Մելգոնեան, մերձակայ սրահին մէջ, ուրախատուկ պատշաճ զեկուցումով եւ զեղեցիկ մեկնաբանութեամբ մը, ներկայացուց օրուան յայտագիրը, Անթոն Պրոք-լինի ստեղծագործութիւնը եւ մաս-

Շար.ը էջ 6

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Բուռն ճնշումներ Սերժ Սարգսեանի նկատմամբ

ՀԱՅԿ ՂԱԻԹԵԱՆ

ԵԿՄ վարչութեան նախագահ Մանուէլ Գրիգորեանը յայտարարել է, որ 100 տոկոսով ուզում է Սերժ Սարգսեանին տեսնել վարչապետ եւ նրան համարում է անփոխարինելի: «ՀՀԿ-ն ո՞նց չի առաջադրի, իսկ դուք մտածում էք՝ ուրիշ մարդու՞ պէտք է առաջադրի», - հռետորական հարց է հնչեցրել ԵԿՄ նախագահը: «Եթէ դուք կարողանաք այսօր մի հատ մարդու անուն տալ այս Հանրապետութեան մէջ, բացի իրենից, որ կարող է Ալիեւի կամ Ատրպէյճանի հետ Արցախի հարցով «պերեզաւորներ» կամ խօսք տանել, ինձ ասէ՛ք», - ասել է նա:

Երբ Մանուէլ Գրիգորեանի առաջարկին ի պատասխան՝ լրագրողները վարչապետ Կարէն Կարապետեանի անունն են տուել, նա հակադարձել է. «Կարէն Կարապետեանն ո՞վ ա, Կարէն Կարապետեանն ի՞նչ գիտի Արցախից, պատերազմից: Լաւ վարչապետ է, կարող է յետագայում Կարէն Կարապետեանը Սերժից էլ լաւ աշխատի, Վազգէնից էլ, Լեւոնից էլ, Ռոբերտից էլ լաւ իմանայ, բայց էս պահին

դուք ինձ անուն տուէ՛ք: Այս պահին ես չեմ տեսնում», - եզրափակել է նա եւ նաեւ հիմնաւորել իր մօտեցումը, թէ երբ 2014-ին Սերժ Սարգսեանը յայտարարել է, որ այլեւս չի ուզում նախագահ, Աժ նախագահ կամ վարչապետ դառնալ, բոլորովին այլ քաղաքական իրավիճակ է եղել. «Դէ էն վախտ ուրիշ քաղաքականութիւն էր, ուրիշ երեւոյթ էր, հիմա Աժ-ն լրիւ փոխուել է, էն վախտ Սահմանադրութիւն էր փոխուել, հիմա Սահմանադրութիւն է փոխուել»:

Սերժ Սարգսեանի վարչապետ դառնալու հարցին անդրադարձել է նաեւ ՀՀԿ խմբակցութեան ղեկավար Վահրամ Բաղդասարեանը՝ յայտարարելով, որ առաջադրուելու հարցը Սերժ Սարգսեանը միանձնեայ չի որոշում. «Այդ որոշումը պէտք է կայացնի թիմը, իսկ անձը՝ ենթարկուի»: Ըստ Բաղդասարեանի՝ քաղաքականութեան մէջ պէտք է ցանկութիւններին տուրք տալ: Իւրաքանչիւր քաղաքական գործիչ կարող է անել յայտարարութիւն, իսկ որոշումը կայացնում է թիմը, որին բոլորն անխտիր պէտք է ենթարկուեն, ուստի եթէ Սերժ

Սարգսեանը ցանկութիւն ունենայ հրաժարուել վարչապետ դառնալուց պէտք է հիմնաւորումներ ներկայացնի:

Առաջին հայեացքից անլուրջ տպաւորութիւն է ստեղծուում, թէ Սերժ Սարգսեանը ենթարկուում է ՀՀԿ-ի բուռն ճնշումներին եւ պարտադրուած է խաղալ թիմի պատուէրով: Բայց սա ընդամենը առաջին հայեացքից, որովհետեւ եթէ խօսքը, բացի Սերժ Սարգսեանից, վերաբերէր կամայական այլ մարդու, ապա յայտարարութիւնը կարելի էր դիտարկել որպէս մարդու իրաւունքների եւ ազատութիւնների ոտնահարում:

Ըստ էութեան, քաղաքական վարչապետ կայացումը որոշումը աւարտին հասցնելու վերջին էտապը տխուր հետեւանք է ունենում յատկապէս Կարէն Կարապետեանի համար: Փաստօրէն, ՀՀԿ-ում բոլորն անխտիր աներկբայ ընդունում են Սերժ Սարգսեանի վարչապետ դառնալու անշրջելիութիւնը, եւ ամէն մէկը դա հիմնաւորում է իւրովի: Մանուէլ Գրիգորեանը քաղաքական բաւարար ճկունութիւն չունենալու պատճառով ամէն ինչ ասել է ճակատին՝ Կարէն Կարապետեանի

ինչ գիտի՝ Ղարաբաղն ինչ է: Վահրամ Բաղդասարեանը չդուժ է արել թիմին, որը եւս հաւանաբար Սերժ Սարգսեանի առաջադրման մէջ կարեւոր գործօն է դիտարկելու անվտանգութեան բաղադրիչը: Իսկ այն, ինչ ասել էր Սերժ Սարգսեանը 2014 թուականին, պարզուում է՝ ընդամենը անհատական մակարդակով արուած յայտարարութիւն էր, որը համաձայնեցուած էր ՀՀԿ-ի քաղաքական թիմի հետ:

Բայց ՀՀԿ-ն, մեղմ ասած, այս խաղում ազնիւ է: Ի վերջոյ, եթէ ՀՀԿ-ի քաղաքական թիմը համոզուած է, որ Կարէն Կարապետեանին Ղարաբաղի հարցի կարգաւորումն ու բանակցութիւնները չի կարելի վստահել, ինչո՞ւ էր այդ դէպքում 2017 թուականի խորհրդարանական ընտրութիւնների համամասնական ցուցակը գլխաւորում հենց Կարէն Կարապետեանը: ՀՀԿ-ն Աժ ընտրութիւնների ողջ քարոզարշաւը տարաւ Կարէն Կարապետեանի անձնական վարկանիշի քարոզութեամբ եւ նրա անձի շուրջ ստեղծուած ՊՌ-ով: Ինչո՞ւ գեներալ Մանուէլը այն ժամանակ անկեղծութիւն չունեցաւ յայտարարելու, որ իրենց ցուցակի առաջին համարը չգիտի, թէ ինչ բան է Ղարաբաղը: Եւ վերջապէս նոյն ՀՀԿ-ն ու Սերժ Սարգսեանը, երբ Մոսկուայից հրաւիրուած էին Կարէն Կարապետեանին, կարող էին հաշուի առնել, որ նոր սահմանադրութեամբ վարչապետն իրականացնելու է ոչ միայն տնտեսական, այլ նաեւ անվտանգութեան գործառնոյթներ: Թերեւս ամէն ինչ հենց այս հաշուարկով էլ արուել է Սերժ Սարգսեանը հրաւիրել է այնպիսի վարչապետի, որը հետագայում անվտանգութեան հարցերի առումով իր հետ չկարողանայ մրցակցել:

«ՀԱՅԵԼԻ»

«Մարտի 1»-ը Փոխել է Հայաստանի Իշխանութիւնների Վարվելաձեւը

2008-ի յետընտրական ողբերգական իրադարձութիւններից տասը տարի անց, բացասական բազմաթիւ այլ հետեւանքներից զատ, զգալապէս փոխուել է երկրի քաղաքական պրակտիկան: Այսօր կարող ենք վստահաբար պնդել, որ Հայաստանում «ներքաղաքական կեանք» հասկացութիւնը վերջնականապէս վերածուել է կեղծիքի: Դրա փոխարէն երկրում արմատաւորուել է ցանկացած ակտիւութեան ամբողջական զսպման մեքենան՝ անհատականից մինչեւ հաւաքական: Իշխանութիւնները մշակել են իրենց դէմ ամէն կարգի ընդդիմութեան համախմբումը կանխելու արդիւնաւէտ գործիքակազմ:

Հասկանալի է, որ խաղաղ քաղաքացիների գնդակահարման միջոցով իշխանութեան եկած Սերժ Սարգսեանը հենց նոյն օրը կորցրեց հասարակութեան հետ բաց դիմակայութեան ռեսուրսը: Նրա ապագա քաղաքականութեան գիտնանոցում մնացին միայն մանիպուլյատիւրացիան, կաշառումը եւ շանտաժը: Բայց այդ գործիքակազմն ամենագոր չէ եւ կարող է արդիւնաւէտ լինել միայն վարչական-ոստիկանական ահաբեկչութեան կտրուկ աճի պայմաններում: Հետեւաբար՝ ոստիկանութեան եւ դատական եւ համակարգի միջոցով իրականացուող բռնաճնշումները պէտք է դառնային ներքին քաղաքականութեան առանցքը: Այդպէս էլ որոշուեց: Այդ բռնաճնշումներին սկսեցին ենթարկուել գլխաւորապէս քաղաքացիների այն խմբերը, որոնց գործունէութիւնը հնարաւոր էր չէզոքացնել մանիպուլյացիաների, կաշառքի ու շանտաժի միջոցով: Ակտիւ խմբերի պարբերական ձերբակալութիւնները եւ անվերջանալի դատական գործընթացները դարձան ոչ միայն

ճնշման միջոց, այլեւ հասարակութեան գիտակցութեան մեծածաւալ մանիպուլյացիայի կարեւոր մաս:

Բայց դա ընդամենը հենքն էր մանիպուլյացիայի առանցքային գծի համար: Եւ այն կառուցուեց քաղաքական դաշտը կեղծ ընդդիմութեամբ՝ ի դեմս «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան առաջնորդ, օլիգարխ Գագիկ Ծառուկեանի, լցնելու միջոցով: Այդ քաղաքական «պղպղակի» հիմնական գործառնոյթը ընտրութիւնների շրջանում ինքնուրոյն ընդդիմադիր բեւեռի առաջացման կանխումն էր: Ընդդիմադիր ընտրազանգուածի ձայները պէտք է ժողովուէին Ծառուկեանի կողմնակիցների «զամբիւղում» եւ վերածուէին խորհրդարանական մանդատների: Յետագայում այդ մանդատներն ապահովում էին խորհրդարանում իշխանութիւնների ցանկացած որոշման օգտին անցկացուող քուէարկութիւնը: Ազգային ժողովում որեւէ այլ ընդդիմութեան ձայները հասցուեցին նուազագոյնի:

Նկարագրուած մանիպուլյացիայից շատ արագ ծնունդ առաւ Հայաստանում բոլոր քաղաքական ուժերի համընդհանուր համաձայնողական գործելակերպը: Քաղաքական ուժերի ղեկավարները երկար հերթ էին կանգնում Սերժ Սարգսեանի դուռն առջեւ՝ վերջինիս տարբեր ստուերային ծառայութիւններ մատուցելու համար պայմանաւորուածութիւն ձեռք բերելու եւ դրա դիմաց որոշ արտօնութիւններ ստանալու նպատակով: Ներկայում այս միտումը հանգեցրել է համաձայնականների լայն անձնակազմի ձեւաւորմանը, որոնք պատրաստ են արդարացնել Ս. Սարգսեանի ամէն մի որոշում: Իշխանութեան ցանկացած հակա-

ռակորդ կամ լուսանցք մղուեց, կամ յայտնուեց ճաղերի հետեւում:

Վերը նկարագրուած քաղաքականութիւնը 2016 թուականին հանգեցրեց պետութեան լիակատար սնանկացմանը: Դրա վկայութիւններն էին ապրիլեան պատերազմը, գինուած եղանակով վարչակարգի տապալման փորձը եւ ճաք տուած պետական պիւտճէն: Կտրուկ աճել էր բռնաճնշումների եւ մանիպուլյացիաների մակարդակը: Բայցեւայնպէս՝ Սերժ Սարգսեանը ստիպուած էր երկրի ֆինանսական եւ տնտեսական ոլորտը յանձնել ռուս միլիարդատէրերի ողորմածութեանը՝ գուզահեռաբար զոհաբերելով կառավարութիւնում հաւաքուած առանցքային կոռուպցիոներներին: Հասկանալի է, որ այդ ամէնը նպատակ ունէր պահպանելու Սարգսեանի առաջնութիւնը երկրի քաղաքական համակարգում:

Սակայն նոյնիսկ այդ քայլերը բաւարար չէին լինի, եթէ կանխաւ չիրականացուէր «իրականացնող յեղաշրջում»՝ երկրի նախագահի ուղղակի ընտրութեան ինստիտուտի լուծարումը: Բացի դրանից, երկրում պաշտօնապէս հռչակուեց «ազգ-բանակ» գաղափարախօսութիւնը, որը կոչուած էր ապահովել իշխանութիւնների քաղաքականութեան մէջ անվտանգութեան խնդրի առաջնութիւնը: Այսինքն՝ Հայաստանում կատարուեց այն, ինչը հանդիպում է այն դէպքում, երբ կապիտալի իշխանութիւնը յայտնուում է ճգնաժամում. «Կարգ՝ յանուն ազգի» գաղափարի ֆետիշացում եւ դրանով պետական եւ կարգի գաղափարի փոխարինում: Մնում է միայն այս գաղափարների տիրոջը տեղափոխել ազգի ֆիւրերի աթոռին...

«Acnis.am»

www.massisweekly.com

Հրատարակելով հայաստանեան մամուլին մեջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնէր հոն արտայայտուող բոլոր միտքերը

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680 Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Արմեն Սարգսեանը Նախագահի Պաշտօնը Կը Ստանձնէ՝ Խախտելով Սահմանադրութիւնը».

ԴԿ-ՆԵՐԸ ԴԱՄԱՏԵՂ Յայտարարութիւնը

Հասարակական շուրջ մէկ տասնեակ կազմակերպութիւններ համատեղ յայտարարութիւն տարածած են, թէ Արմէն Սարգսեանը նախագահի պաշտօնը կը ստանձնէ՝ «խախտելով Սահմանադրութեամբ յստակ սահմանուած քաղաքացիութեան հետ կապուած պահանջը»:

«Ազգային ժողովը քննարկելով Հայաստանի Հանրապետական կուսակցութեան (ՀՀԿ) կողմից ՀՀ նախագահի պաշտօնում առաջադրուած Արմէն Սարգսեանի թեկնածութիւնը՝ Մարտի 2-ին 90 կողմ ու 10 դէմ ձայնով նրան ընտրեց ՀՀ նախագահ: Մենք՝ ներքոստորագրեալներս, արձանագրում ենք, որ Արմէն Սարգսեանը որեւէ կերպ չփարատեց իր քաղաքացիութեան հետ կապուած կասկածները, մասնաւորապէս առ այն, որ նա չի բաւարարում վերջին վեց տարում միայն Հայաստանի Հանրապետութեան քաղաքացի լինելու սահմանադրական պահանջը: Թէեւ բազմաթիւ հարթակներում հնչեցուել էր հանրութեան պահանջը՝ հրապարակելու Մեծ Բրիտանիայի քաղաքացիութիւնը դադարեցնելու պահը հաւաստող փաստաթուղթը, Ա. Սարգսեանը ներկայացրեց ընդամենը տեղեկանք՝ տրուած ՀՀ ոստիկանութեան անձնագրային եւ վիզաների վարչութեան կողմից, ինչն ընդամենը վկայում է նրա ՀՀ քաղաքացի լինելու մասին եւ չի կարող փոխարինել Մեծ Բրիտանիայի պետական մարմնի կողմից

տրուած փաստաթղթին, որը կարող էր լինել միակ արժանահաւատ ապացոյցը: Այս փաստաթղթի բացակայութեան պարագայում աւելի են խորանում քաղաքացիութեան օրինականութիւնը չբաւարարելու հետ կապուած հանրութեան կասկածները, ինչպէս նաեւ բացայայտ կերպով դրսեւորուած է Արմէն Սարգսեանի քամահրական ու անյարգալից վերաբերմունքը Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան եւ քաղաքացիների նկատմամբ», - ըստուած է յայտարարութեան մէջ:


Յայտարարութիւնը ստորագրած են՝ «Թրանսփարենսի Ինթըրնաշնլ» հակակաշառակերական կեդրոնը, լրագրողներու «Ասպարէզ» ակումբը, «Իրազեկ քաղաքացիներու միաւորում», «Բաց հասարակութեան հիմնադրամներ - Հայաստան», «Յանուն հաւասար իրաւունքներու» հասարակական կազմակերպութիւնները, Հէլսինքեան քաղաքացիական խորհուրդի վանաձորի գրասենեակը:

Նշենք, որ Հայաստանի Սահմանադրութեան համաձայն՝ նախագահ կրնայ ընտրուիլ վերջին վեց տարիներում միայն Հայաստանի քաղաքացի հանդիսացող անձը: Մինչդեռ «Հետք» պարբերականը օրերս հրապարակած է բրիտանական ընկերութիւններու արձանագրութիւններէն վերցուած տուեալներ, որոնց համաձայն՝ Ա. Սարգսեանը 2014 թուականին դեռ եղած է Մեծ Բրիտանիոյ քաղաքացի:

«Եթէ Քաղաքական Խումբը Որոշում Կայացնէ, Սերժ Սարգսեանը պետք է Ենթարկուի Ու Դառնայ Վարչապետ».

Վահրամ Պաղտասարեան

«Սերժ Սարգսեանը միանձնեայ որոշում չի կայացնէր, այդ որոշումը պէտք է կայացնէ քաղաքական խումբը, իսկ անձը՝ ենթարկուի», Ազգային ժողովի ճեպագրողներու ժամանակ ըսած է ՀՀԿ խմբակցութեան ղեկավար Վահրամ Պաղտասարեանը, անդրադառնալով 2014-ին Սերժ Սարգսեանի այն յայտարարութեան, թէ ինքը չի յաւակնիր ո՛չ նախագահի, ո՛չ ալ վարչապետի թեկնածութեան:



ԴԿԿ խմբակցութեան ղեկավար Վահրամ Պաղտասարեան

Կարող են այդ հարցը բարձրացնել, կը տանք դրանց բացատրութիւնները, իսկ վարչապետի ընտրութիւնը կը կազմակերպուի կանոնակարգի համաձայն: Որեւէ խախտում չի լինի», - նշած է ան:

Հարցին, թէ արդեօք «Ելք»-ը կը կարենայ տասնեակ հազարաւոր մարդիկ հաւաքել, որոնք դէմ կ'ըլլան վարչապետի պաշտօնին համար Սերժ Սարգսեանի թեկնածութեան, Պաղտասարեանը նշած է.

«Կարող էք հետեւել վերջին տարիների ընթացքում ընդդիմութեան կազմակերպած ցույցերին ու անել հետեւութիւններ»:

«Անականակների մի սպասէք: Մենք որոշում չունենք, իսկ քաղաքականութեան մէջ ոչինչ չի բացառուում: Ամէն օր փոխում են բաներ: Մենք կը քննարկենք, ձեզ տեղեակ կը պահենք», - աւելցուցած է Վահրամ Պաղտասարեան:

«Հանրային Ծնշման Պարագային Կրնանք Թոյլ Չտալ Սերժ Սարգսեանի Վերարտադրութիւնը».

Փաշինեան

Սերժ Սարգսեանը վարչապետի պաշտօնին կրնայ չ'առաջադրուիլ միայն մէկ պայմանով՝ հանրային ճնշումով, ըսած է Ազգային ժողովի «Ելք» խմբակցութեան ղեկավար՝ Նիկոլ Փաշինեանը, 5 Մարտին, Երեւանի Ազատութեան հրապարակը քաղաքական արժեքներու հետ հանդիպման ժամանակ:



Նիկոլ Փաշինեան Ազատութեան հրապարակի վրայ հանդիպում կ'ունենայ քաղաքական արժեքներու հետ

«Իրավիճակ է զարգանում, երբ ՀՀԿ-ն վարչապետի թեկնածու է առաջադրում Սերժ Սարգսեանին: Ես կարծում եմ, որ դա կարող է տեղի չունենալ միայն մի պայմանում, երբ լինի հանրային ճնշում: Հանրութիւնը պէտք է իր կարծիքն արտայայտի եւ կարծում եմ, որ էն քաղաքական ուժը, որը նաեւ ընտրութիւնների արդիւնքներով որոշակի առաջնորդական դիրք է ունեցել, այդ հնարաւորութիւնը կարող է տալ: Մենք մեր կուսակցութիւնում կը քննարկենք եւ բոլոր հարցերի պատասխանը կը տանք», - ըսած է ան:

Նիկոլ Փաշինեանը նշած է, որ հնարաւոր է առանց բռնութեան, խղաղ ցույցերու, հանրային ճնշման միջոցով հասնի այն բանին, որ Սերժ Սարգսեանը վարչապետի պաշտօնին չ'վերարտադրուի:

Հայաստանի մէջ կը ներդրուի վարչապետական միապետութիւն եւ նման համակարգ կրնայ ստեղծուիլ միայն Սերժ Սարգսեանի համար, այս մասին խորհրդարանական ճեպագրողներու ժամանակ յայտարարած է Նիկոլ Փաշինեանը՝ պատասխանելով «Ազատութեան» հարցին, թէ ուրկէ՞ իրեն այն համոզմունքը, որ Սերժ Սարգսեանը

եանը, հակառակ ըրած յայտարարութեան, թէ վարչապետ կամ նախագահ պիտի չ'դառնայ, միեւնոյնն է, պիտի առաջադրուի վարչապետի պաշտօնին:

«Ազատութեան» հարցին, թէ արդեօք հնարաւոր կը համարէ, որ ժողովուրդին «Ազատութեան» հրապարակ հաւաքելէն ետք պարզ դառնայ, որ Սերժ Սարգսեանը չի ցանկար վարչապետի պաշտօնին առաջադրուիլ, Նիկոլ Փաշինեանն ըսած է, թէ այդ սենարը հաւանական չի համարել՝ դատելով կատարուող օրէնսդրական փոփոխութիւններէն:

«Այո, նման սենարը ես այս պահին հաւանական չեմ համարում, նման սենար հաւանական եմ համարում միայն ժողովրդի ճնշման ներքոյ: Եթէ Դուք, օրինակ, վաղուայ արտահերթի օրէնսդրական փաթեթները նայէք, կը տեսնէք, որ Հայաստանում այս օրէնսդրական փաթեթներով ներդրում է վարչապետական (բռնապետութեան) տիքթաթուրայի համակարգը, եւ թոյլ տուէք ասել, որ նման համակարգ կարող է կառուցուել միայն Սերժ Սարգսեանի համար», - յայտարարած է ընդդիմադիր պատգամաւորը:

Գրանցուած է Նախորդ Տասնամեակի Ամենաբարձր Տնտեսական Աճը՝ 7.5 Տոկոս

Ազգային վիճակագրական ծառայութեան երէկ հրապարակած տուեալներու համաձայն, 2017-ին, 2016-ի համեմատ, երկրի տնտեսութիւնը աճած է 7.5 տոկոսով:

Յատկանշական է, որ ԱՎԾ-ն այս թիւը հրապարակած է նախագահ Սարգսեանի յայտարարութեանէն ընդամենը ժամեր անց:

Նախագահականի լրատուական ծառայութեան հաղորդագրութեան համաձայն, վարչապետ Կարէն Կարապետեանի, փոխվարչապետ Վաչէ Գաբրիէլեանի, Կեդրոնական դրամատան նախագահ Արթուր Զաւատեանի եւ սոցիալ-տնտեսական ոլորտի համար պատասխանատու այլ պաշտօններու հետ խորհրդակցութեան Սերժ Սարգսեանը ոչ միայն կարեւորած է յառաջիկայ տարիներուն տնտեսական աճի բարձր վարկանիշերու ապահովելը, այլեւ ընդգծած է. - «Տնտեսական աճի արդիւնքները պէտք է հասանելի լինեն հանրութեան բոլոր շերտերի եւ յատկապէս՝ սոցիալապէս խոցելի խաւերի համար»:

Սերժ Սարգսեանը կրկին խօսած է երկարատեւ ռազմավարութեան մասին. - «Ես կարծում եմ,

որ մօտակայ մի քանի շաբաթների ընթացքում մենք աւարտին կը հասցնենք մինչեւ 2030 թուականը Հայաստանի տնտեսական եւ սոցիալական զարգացման ռազմավարութիւնը»:

Առաջին անգամը չէ, որ շուրջ քսան տարի Հայաստանի մէջ իշխող Հանրապետական կուսակցութեան առաջնորդը կը խօսի երկարատեւ տնտեսական աճի մասին: Նախորդը 2013-ի Մարտին էր, երբ Սերժ Սարգսեանը կառավարութենէն պահանջած էր յետագայ տարիներուն ապահովել առնուազն 7 տոկոս տնտեսական աճ. - «Հայաստանի Հանրապետութեան այն կառավարութիւնը, որ տարուայ արդիւնքներով, դա վերաբերում է 13 թուականին, 14-ին, 15-ին, 16-ին, 17-ին, չապահովի 7 տոկոս տնտեսական աճ, այդ կառավարութիւնը պէտք է հրաժարական տայ»:

Իրականութիւնը, սակայն, այլ է. Ազգային վիճակագրական ծառայութեան տուեալներու համաձայն, 2013-2017 թուականներուն տարեկան միջին տնտեսական աճը կազմած է ճիշդ երկու անգամ քիչ՝ 3.5 տոկոս:

ԼՈՒՐԵՐ

Թրքական Դատարանը Բեկանած է Տիարպեքիի Սուրբ Կիրակոս Եկեղեցույ Պետականացման Որոշումը



Տիարպեքիի հայկական Սուրբ Կիրակոս Եկեղեցին

Թուրքիոյ Գերագոյն վարչական դատարանը բեկանած է Տիարպեքիի հայկական Սուրբ Կիրակոս Եկեղեցույ պետականացման որոշումը: Այս մասին կը հաղորդէ «Էրմէնիհասպեր»ը:

Տիարպեքիի մէջ քիւրտերու հետ բախումներէն ետք՝ Թուրքիոյ կառավարութիւնը 21 Մարտ 2016-ին որոշած էր պետականացնել Տիարպեքիի Սուրբ շրջանի մէկ հատուածը, ուր կը գտնուէին հայկական Սուրբ Կիրակոս, քաղղէական Սուրբ Սարգիս, հայկական կաթոլիկ, ասորական Սուրբ Աստուածածին եւ բողոքական եկեղեցիները:

Սուրբ Կիրակոս եկեղեցույ հիմնադրամը Գերագոյն վարչական դատարանին մէջ բողոքարկած էր նախարարներու խորհուրդի որոշումը: Դատարանն ալ կառավարութեան որոշումը չեղարկելու վճիռ կայացուցած է՝ յղում ընելով

սեփականութեան իրաւունքի պաշտպանութեան գործերով Սահմանադրական եւ Մարդու իրաւունքներու եւրոպական դատարաններու (ՄԻԵԴ) կայացուցած վճիռներուն:

Դատարանը գործի քննութեան ընթացքին հարցադիմում ուղարկած էր Թուրքիոյ շրջակայ միջավայրի եւ քաղաքաշինութեան նախարարութիւն՝ պահանջելով տեղեկութիւն տրամադրել եկեղեցույ պետականացման պատճառներուն, յետագայ շահագործման նպատակներուն մասին: Սակայն նախարարութիւնը որեւէ կերպ չէ արձագանգած դատարանի հարցման:

Նշենք, որ եկեղեցին Թուրքքրտական բախումներուն ժամանակ մեծ վնաս կրած էր եւ 2015 թուականէն փակ էր մինչեւ այսօր: Եկեղեցույ տարածք մուտքը արգիւրած է, քանի որ անիկա կը գտնուի անվտանգութեան ուժերու հսկողութեան տակ:

«Մենք Երկու Կողմերն Ալ Կը Խրախուսենք Հաշտեցման» ԱՄՆ-ի Դեսպանատուն

Կարգաւորման գործընթացը կարեւոր օգուտներ կը բերէ Թուրքիոյ, Հայաստանի, ինչպէս նաեւ Կովկասեան ողջ տարածաշրջանի համար: Այդ մասին NEWS.am-ի հարցմանն ի պատասխան յայտնած են ԱՄՆ-ի դեսպանատունէն՝ մեկնաբանելով հայ-թրքական արձանագրութիւններու կնքման ընթացակարգի կասեցումը:

«Մենք տեղեկ ենք, որ նախագահ Սարգսեանը յայտարարեց 2009-ին Յիւլիսի մէջ ստորագրուած հայ-թրքական արձանագրութիւնները պաշտօնապէս չեղարկելու մասին, սակայն ան միաժամանակ փաստեց, որ Հայաստանը պիտի շարունակէ հաւատա-

րիմ մնալ ապագային առանց նախապայմաններու Թուրքիոյ հետ յարաբերութիւններու կարգաւորման իր յանձնառութեան: Մենք երկու կողմերն ալ կը խրախուսենք հաշտեցման ու յարաբերութեանց կարգաւորման համար դուռը բաց պահել: Կարգաւորման գործընթացը կարեւոր օգուտներ կը բերէ Թուրքիոյ եւ Հայաստանի, ինչպէս նաեւ Կովկասեան ողջ տարածաշրջանի համար», - նշած են դեսպանատունէն:

Յիշեցնենք, որ 1 մարտին ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանի հրամանագրով դադարեցուած է հայ-թրքական արձանագրութիւններու կնքման ընթացակարգը:

Խորհրդարանը Ընտրեց Բարձրագոյն Դատական Խորհուրդի 5 Անդամներ

Հայաստանի խորհրդարանը փակ գաղտնի քուէարկութեամբ ընտրած է Բարձրագոյն դատական խորհուրդի 5 անդամները:

Խորհուրդի անդամի առաջին պաշտօնին ընտրուած է Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Յարութիւնեանը, երկրորդ պաշտօնին՝ Արդարադատութեան նախկին նախարար Գէորգ Դանիէլեանը, երրորդ պաշտօնին՝ իրաւաբանական գիտութիւններու թեկնածու Լիպարիտ Մելիքեանեանը,

չորրորդ պաշտօնին՝ Հայաստանի հաշտարարներու ինքնակարգաւորող կազմակերպութեան նախագահ Հայկ Յովհաննիսեանը, հինգերորդ պաշտօնին՝ Իրաւագիտութեան հիմնարկի Քաղաքացիական դատավարութեան ամպիոնի վարիչ Սերկէյ Մեղրեանը:

Խորհուրդի առաջին երեք անդամներն ընտրուած են հինգ, վերջին երկուքը՝ երեք տարի ժամկէտով:

Նշենք, որ Բարձրագոյն դա-

Հայաստան Դադարեցուցած է Հայ-Թուրքական Արձանագրութիւնները

Նախագահ Սերժ Սարգսեան ստորագրած է հրամանագիր «Հայաստանի Հանրապետութեան եւ Թուրքիոյ Հանրապետութեան միջեւ դիւանագիտական յարաբերութիւններ հաստատելու մասին» եւ «Հայաստանի Հանրապետութեան եւ Թուրքիոյ Հանրապետութեան միջեւ յարաբերութիւններու զարգացման մասին» արձանագրութիւններու կնքման ընթացակարգը դադարեցնելու մասին:

Ինչպէս տեղեկացուցած են ՀՀ Նախագահի աշխատակազմի հասարակայնութեան եւ տեղեկատուութեան միջոցներու հետ կապերու վարչութեան, ՀՀ Նախագահի հրամանագրին մէջ ըսուած է.

«Ղեկավարուելով 2005 թուականի փոփոխութիւններով Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան 55-րդ յօդուածի 7-րդ կէտով եւ հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետութեան միջազգային պայմանագրերի մասին» Հայաստանի Հանրապետութեան օրէնքի 39.1-ին յօդուածի 1-ին մասը՝ որոշում եմ

1. Դադարեցնել 2009 թուականի Հոկտեմբերի 10-ին Յիւլիս-

իւում ստորագրուած «Հայաստանի Հանրապետութեան եւ Թուրքիայի Հանրապետութեան միջեւ դիւանագիտական յարաբերութիւններ հաստատելու մասին» եւ «Հայաստանի Հանրապետութեան եւ Թուրքիայի Հանրապետութեան միջեւ յարաբերութիւնների զարգացման մասին» արձանագրութիւններու կնքման ընթացակարգը:

2. Հայաստանի Հանրապետութեան արտաքին գործերի նախարարին՝ արձանագրութիւնների կնքման ընթացակարգը դադարեցնելու մասին ծանուցել Թուրքիայի Հանրապետութեանը»:

Նախագահ Սարգսեանը շեշտած է, որ Թուրքիան ուղղակի կոպիտ ձեւով չվաւերացուց արձանագրութիւնները՝ առաջ քաշելով անոնց հետ կապ չունեցող նախապայմաններ. - «Անցած ինը տարիների ընթացքում Անկարան, վերադառնալով իր անհիմն նախապայմաններին, ոչ միայն որեւէ քայլ չառեց արձանագրութիւնները վաւերացնելու եւ ուժի մէջ մտնելու համար, այլեւ որեւէ կասկած չթողեց, որ նա չի պատրաստուում այդ գործընթացը իրականացնել»:

Նոպելեան Մրցանակակիրները Բաց Նամակ Յղած են Էրտողանին

Նոպելեան մրցանակի արժանացած 38 յայտնի անձինք բաց նամակ յղած են Թուրքիոյ նախագահ Էրտողանին՝ կոչ ընելով ազատ արձակել երկրի մէջ ձերբակալուած գրողները ու վերականգնել օրէնքի գերակայութիւնը: Ինչպէս կը հաղորդէ «Արմէնբրես»-ը, բրիտանական The Guardian-ին մէջ հրատարակուած բաց նամակին մէջ անոնք նշած են, որ «քանի դեռ Թուրքիան ազատ չէ արձակած կայանաւորուած գրողները եւ չէ վերադարձուցած օրէնքի գերակայութեան, այն չի կրնար ազատ աշխարհի մաս ըլլալ»:

«Յարգելի նախագահ Էրտողան, կը ցանկանք Ձեր ուշադրութիւնը հրաւիրել այն հանգամանքի վրայ, թէ ինչպէս լրագրողներու ու մտաւորականներու անօրինական ձերբակալութիւնները եւ անիրաւ դատապարտումը վնասած են Թուրքիոյ Հանրապետութեան, անոր հեղինակութեան եւ քաղաքացիներու արժանապատուութեանն ու բարեկեցութեան», - այս տողերով Նոպելեան մրցանակակիրները սկսած են իրենց նամակը:

Յիշատակելով ԵՄ մարդու իրաւունքներու նախկին յանձնակատար Նիլս Մուժիւնքսի՝ 2017 թուականին Թուրքիոյ մէջ խօսքի ազատութեան վերաբերեալ հրապարակումը, ուր ան ընդգծած էր Թուրքիոյ մէջ մարդու հիմնարար ազատութիւններու աղաղակող սահմանափակումներու մասին՝ անոնք նշած են, որ 2016 թուականի Սեպտեմբերին Թուրք վիպագիր եւ սինակագիր Ահմետ Ալթանի, անոր եղբոր՝ տնտեսագիտութեան փրոֆեսոր եւ ակնարկագիր Մեհմետ Ալթանի, ինչպէս նաեւ յայտնի լրագրող Նազլը Ըլըճաքի ձերբակալութիւնները ձախողած ուղղափառ յեղաշրջման յաջորդած ձեր-

բակալութիւններու ալիքի շարունակութիւնն են:

Նամակի հեղինակներն ընդգծած են, որ վերոնշեալ անձանց դէմ իրաւական գործընթացները խօսքի ազատութեան հարցերով ՄԱԿ-ի յատուկ գեկուցող Տեւիտ Քայնն որակած է որպէս «ցուցադրական դատավարութիւն»:

Նոպելեան մրցանակակիրները չիշեցուցած են 2009 թուականին Թուրք գրող Չեթին Ալթանին նուիրուած երեկոյի ժամանակ էրտողանի խօսքերն այն մասին, թէ «Թուրքիան արդէն հին Թուրքիան չէ, որ մեծ գրողները կը բանտարկէ, այդ դարաշրջանն արդէն անցած է»: «Ելլոյթն ունկնդրողներու շարքին էին նաեւ Չեթին Ալթանի երկու որդիները՝ Ահմետ եւ Մեհմետ: Ինը տարի անց անոնք դատապարտուեցան ցմահ ազատազրկման: Արդեօք սա հակասութիւն չէ՞», - նշած են նամակի հեղինակները:

Նամակի աւարտին անոնք նշած են, որ կ'արտայայտեն Թուրքիոյ մէջ գտնուողներու, Թուրքիոյ դաշնակիցներու եւ այդ երկրի կողմէն մաս կազմող միջազգային կազմակերպութիւններու մտահոգութիւնն այդ երկրի մէջ տեղի ունեցող զարգացումներու վերաբերեալ: «Մենք կոչ կ'ընենք դադարեցնել երկրի մէջ յայտարարուած արտակարգ դրութիւնը, վերադառնալ օրէնքի գերակայութեան եւ խօսքի ու մտքի բացարձակ ազատութեան», - նշած են անոնք՝ ընդգծելով, որ միայն այդպիսով Թուրքիան կը կարենայ դառնալ ազատ աշխարհի մաս:

Նամակը հեղինակած են Քաճու Իսիքուրոն, Սվետլանա Ալեքսիեւիչը, Մարիօ Վարկաս Լիոսան, Հերթա Միւլլերը, Ռենտի Շեքմանը, Աւրամ Հերշկօն եւ այլք:

տական խորհուրդը հանրապետութեան նախագահին պիտի առաջարկէ նշանակել դատաւորներու,

դատարաններու նախագահներու եւ վճռաբեկ դատարանի պալատներու նախագահներու թեկնածուները:

«Արմէն Սարգսեանի Ընտրութեանը Դանրապետութիւնը Նոր Փուլ Թելակոխեց». Արմէն Մկրտչեան



Ինչպէս արդէն յայտնի է, Ազգային ժողովը 90 կողմ, 10 դէմ ձայներով քուէարկեց Հայաստանի Հանրապետութեան 4-րդ նախագահի միակ թեկնածու Արմէն Սարգսեանի օգտին:

Politics.am-ը այս գործընթացի մասին գրուցել է Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան Հայաստանի կառուցի քաղաքական խորհրդի ղեկավար Արմէն Մկրտչեանի հետ:

«Ինչպէս մամուլից տեղեկացանք, դեռ շաբաթներ առաջ նախագահի թեկնածու Արմէն Սարգսեանը արտախորհրդարանական ուժերից առաջինը հիւրընկալուեց ձեր կուսակցութեան գրասենեակում: Ի՞նչ տուեց այդ համդիպումը:

«Ճիշտ էք նկատել, եւ մենք հանդիպման ընթացքում Արմէն Սարգսեանին ներկայացրել ենք թէ համայն հայութեան առաջ դրուած մարտահրաւերները վերաբերեալ մեր մտահոգութիւնները, թէ ներհայաստանեան խնդիրները շուրջ, եւ ստացել ենք բաւական հետաքրքիր ու ծանրակշիռ պատասխաններ: Հանդիպման ընթացքում քննարկել ենք երկրում առկայ սոցիալական խնդիրները, արտագաղթի տեմպերը, բոլորիս այդքան յուզող գնաճի կարգաւորման հնարաւորութիւնները, նոր աշխատատեղերի ստեղծման հնարաւորութիւնները եւ այլն: Մեզ բաւական հարցերի պատասխաններ տուեց այդ հանդիպումը: Դա հանդիպում էր Հայաստանի ապագայով մտահոգ մարդու, բովանդակալից ծրագրեր ունեցող մարդու եւ հայկական ամենահին քաղաքական ուժի միջնակ:

«Արմէն Սարգսեանը ստացաւ խորհրդարանի ճնշող մեծամասնութեան քուէները: Ինչպէ՞ս կը գնահատեք այս փաստը:

«Նախ ասեմ, որ Արմէն Սարգսեանի հետ անձնական շփումը եւ նրա հանդէպ հանրային ընկալման դրական մօտեցումը ամբողջութեամբ համընկան, եւ տրամաբա-

նական էր, որ նոյն տպաւորութիւնը շատերի մօտ է լինելու: Մենք տարիներ շարունակ բարձրաձայնել ենք կենսագրութիւն չունեցող, գիտութիւնից հեռու, կամային յատկանիշներից զուրկ ու հայ ժողովրդի հաշուին հարստացած իշխանաւորների դէմ, եւ այս դէպքում Արմէն Սարգսեանը 180 աստիճանով հակառակ օրինակն է: Մենք մեր առջեւ ունենք մարդու, ով դեռ խորհրդային տարիներից է համաշխարհային հռչակ ձեռք բերել, մարդու, ով անկախ Հայաստանի կայացման գործում ունի իր աւանդը, ով դիւանագիտական լրջագոյն գործունէութիւն է ծաւալել եւ մարդու, ով իր ընտանեկան բիզնեսներն է կարողացել զարգացնել հայրենիքից հեռու, մշտապէս կապ պահելով Հայաստանի հետ: Եւ եկէք հաշուի առնենք, որ բացի իշխող կուսակցութիւնից, մեծ հաշուով որեւէ քաղաքական ուժ այլընտրանք չէր կարող ներկայացնել, իսկ իշխող կուսակցութեան կադրային բազայում Արմէն Սարգսեանի որակական յատկանիշներին համեմատուող երկրորդ անձը չկայ:

«Փաստօրէն դուք ողջունում է՞ք Սարգսեանի ընտրուելը:

«Փաստօրէն մենք ֆիքսում ենք, որ հնարաւոր այլընտրանքների բացակայութեան, եղած ներկայանակի առկայութեան պայմաններում Արմէն Սարգսեանը լաւագոյն տարբերակն էր եւ մեզ համար ընկալելի նախագահի թեկնածու:

«Այնուամենայնիւ նախագահը նոր Սահմանադրութեամբ բաւական քիչ լիազօրութիւններ ունի: Ի՞նչ ակնկալիքներ ունէք, արդեօք Արմէն Սարգսեանը կը կարողանայ կեանքի կոչել իր ծրագրերը:

«Ինձ թւում է ցանկացած պաշտօն կարեւորում եւ ուժ է ստանում պաշտօնը զբաղեցնող անձով: Կեանքը առջեւում է, սակայն ես լիայոյս եմ որ Արմէն Սարգսեանի ընտրուելով դրական փոփոխութիւնների սկիզբ կը դրուի:

Պէյրուֆի Մէջ Ծեծի Ենթարկուած Է «Թիւֆէնքեան» Դիմնադրամի Տնօրէն Ռաֆֆի Տուտազլեանը

«Թիւֆէնքեան» հիմնադրամի գործադիր տնօրէն Ռաֆֆի Տուտազլեանը Պէյրուֆի հայաշատ Պուրճ Համուտ թաղամասին մէջ դաժան ծեծի ենթարկուելէ ետք հիւանդանոց տեղափոխուած է՝ գլուխու աչքի կարգ մը վնասուածքներով եւ դիմաձնոտային կոտորուածքներով:

Անյայտ անձինք 26 Փետրուարին յարձակած էին Տուտազլեանի եւ իր գործընկերոջ վրայ «Շաղ-գոյեան» մշակութային կեդրոնի կառատան մօտ: Յարձակման պատճառը դեռ չայտնի է:

Շատ անհատներ եւ կազմակերպութիւններ, ինչպէս Գանատահայ դերասանուհի Արսինէ Խանճեանը, Արցախի մարդու իրաւունքներու պաշտպան Ռուբէն Մելիքեանը եւ Հայկական իրաւաբանական միութիւնը դատապարտած են կատարուածը:

«Անշափ գարմացայ ու գայրացայ՝ տեղեկանալով Թիւֆէնքեան հիմնադրամի հայաստանեան գրասենեակի գործադիր տնօրէն Ռաֆֆի Տուտազլեանի նկատմամբ Փետրուարի վերջին Պէյրուֆում կատարուած յարձակման մասին: Արդէն շուրջ երկու տարի է՝ աշխոյժօրէն (աթիւօրէն) գոր-



ծակցում ենք Ռաֆֆիի հետ, եւ նրա հայրենանուէր գործունէութեան մասին Արցախում գիտեն շատ շատերը: Վստահ եմ, որ նրա վրայ ձեռք բարձրացրած տաք-լուխ դեռահաս-երիտասարդները, երբ մի օր գոնէ մասնակիօրէն գիտակցեն նրա վաստակը Հայրենիքի առջեւ, խորապէս զղջալու ու ներում են խնդրելու Ռաֆֆիից: Շուտափոյթ ապաքինում, Ռաֆֆի ճան», - նշած է Ռուբէն Մելիքեանը:

Ամերիկայի Դեսպան

Շարունակուած էջ 1-էն

կային փոփոխութիւններ իրականացնել համակարգի մէջ», ըսած է դեսպանը:

«Կոռուպցիայի այն տեսակը, որն առաւել մտահոգիչ է, եւ որ ետ կը պահէ ամերիկեան ներդրողներուն, այն կոռուպցիան է, որու հետեւանքով կը փակուին շուկաները, կը ձեւաւորուի անարդար մրցակցութիւն: Կը կարծեմ կոռուպցիայի այս դրսեւորումն ու իշխանութեան այս տեսակ չարաչահումը կը շարունակէ մնալ Հայաստանի ամենամեծ մարտահրաւերը եւ ամենամեծ խոչընդոտը՝ բանալու երկիրը առեւտուրի եւ ներդրումներու համար»:

Տնտեսութեան մէջ հաւասար պայմաններ ապահովելու հարցի մասի խօսելով դեսպան Միլս ըսած է. «Կարեւոր է, որ կառավարութիւնը Հայաստանի մէջ խաղի հաւասար կանոններ ապահովէ բոլոր գործարարներու համար՝ ըլլան անոնք ամերիկացի, եւրոպացի, ռուս, թէ չինացի: Ես անկեղծ ըլլամ՝ մինչ օրս, երբ ամերիկացի ներդրողը կամ գործարարը կու գայ դեսպանատուն, քննարկելու հնարաւոր ներդրումը կամ առեւտրային գործարքը Հայաստանի մէջ, առաջին հարցը, որ ան կու տայ, հետեւեալն է՝ կրնա՞մ վստահ ըլլալ, որ ինձի հանդէպ արդարացի եւ հաւասար մօտեցում պիտի ունենան: Եւ կը կարծեմ, որ ասոր գաղտնիքը այն է, որ Հայաստանը պէտք է ունենայ ազատ, արդար եւ անկախ դատական համակարգ, անկախ դատաւորներ, որոնք կրնան արդար վճիռներ կայացնել»:

Ժողովրդավարութեան մասին խօսելով դեսպանը ըսած է. «21-րդ դարուն, ժողովրդավարութեան կարեւորագոյն բաղադրիչն ու զսպման մեխանիզմը ազատ, աշխոյժ քաղաքացիական հասարակութիւնն է, ինչպէս նաեւ ազատ եւ անկախ

մամուլը: Իսկապէս սա հայկական ժողովրդավարութեան ցաւոտ տեղերէն մէկն է՝ զսպումներու եւ հակակշիռներու սեփական համակարգը ձեւաւորելու եւ իշխանութեան թեւերը տարանջատելու առումով: Աշխատանքն այս ուղղութեամբ դեռեւս կը շարունակուի: Բաց յուսադրող է այն փաստը, որ Հայաստանը ունի շատ աշխոյժ եւ կենսունակ քաղաքացիական հասարակութիւն եւ ազատ մամուլ»:

Դեսպանը խօսած է նաեւ միջազգային իրադրութեանց եւ տարածաշրջանի եւ Հայաստանի վրայ անոնց հնարաւոր ազդեցութեան, յատկապէս Միացեալ Նահանգներու եւ Ռուսաստանի յարաբերութիւններու լոյսին տակ:

«Հակառակ ներկայի խնդիրներուն եւ դժուարութիւններուն՝ Միացեալ Նահանգներ-Ռուսաստան յարաբերութիւններու մէջ, Միացեալ Նահանգներու կառավարութիւնը կը բասկնայ, որ Հայաստանը պէտք է լաւ յարաբերութիւններ ունենայ Ռուսաստանի հետ տնտեսական, դիւանագիտական, մշակութային եւ այլ ոլորտներու մէջ: Մենք երկընտրանք չենք առաջադրեր Հայաստանին, չենք ըսեր, թէ պէտք է ընտրութիւն կատարել մեր եւ Ռուսաստանի միջեւ: Մենք կ'ըսենք, որ յարաբերութիւնները Միացեալ Նահանգներու, Ռուսաստանի, Չինաստանի, Եւրամիութեան հետ չեն հակասեր իրար: Միացեալ Նահանգներու նպատակն այն է, որ Հայաստանը կարենայ ինքնիշխան որոշումներ կայացնել այն մասին, թէ ինչպէս պիտի զարգանայ հետագային քաղաքականապէս, ինչպէս պիտի զարգացնէ իր տնտեսութիւնը, որուն հետ պիտի ունենայ ռազմական յարաբերութիւններ: Մենք կ'ուզենք օգնել ձեզ ըլլալու այնքան անկախ, որպէսզի ինքնուրոյն կայացնէք ձեր որոշումները», հարցազրոյցի ընթացքին շեշտած է Միացեալ Նահանգներու դեսպան Ռիչարտ Միլս:

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին T: (626) 797-7680 massis2@earthlink.net

ՄԱՍԻՍ ԱՍԵՆԱՎՍՏԱԳԵԼԻ ԱՂԲԻՐԸ ԳՎՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

Արա Գոչունեան.- Հայ-Թրքական Յարաբերութիւններու Կարգաւորման Հերթական Հնարաւորութիւնը Բաց Թողուեցաւ

Հայ-թրքական յարաբերութիւններու կարգաւորման հերթական հնարաւորութիւնը բաց թողուեցաւ, «Ազատութեան» հետ գրոցի ժամանակ նման տեսակէտ յայտնած է Թուրքիոյ մէջ հրատարակուող «Ժամանակ» թերթի գլխաւոր խմբագիր Արա Գոչունեանը՝ անդրադառնալով Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանի՝ հայ-թրքական արձանագրութիւններու կնքման ընթացակարգը դադարեցնելու մասին հրամանագրին:



Գոչունեանը հայ-թրքական յարաբերութիւններու կարգաւորում մօտ ապագային չի կանխատեսեր: «Ինչպէս արդէն Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանն անցեալ աշնան յայտարարած էր, Հայաստանի Հանրապետութիւնը, փաստօրէն, 2018-ի գարունը պիտի դիմաւորէ առանց Թուրքիոյ հետ ստորագրուած արձանագրութիւններու: Մօտաւորապէս 10 տարուայ ժամանակաշրջանին հայ-թրքական յարաբերութիւններու ամենայատկանշական վերելքը բնորոշեցին այդ արձանագրութիւնները եւ անկէ ետք ալ, անշուշտ, յաջորդեց համաշափ անկում: Անգարան ու Երեւանը հերթական անգամ իրարմէ չուսախաբ եղան, եւ, դժբախտաբար, հայ-թրքական յարաբերութիւններու միջպետական հարթութեան վրայ բնականոնացման որոնումներու միջնորդութիւնը մէջ հերթական հնարաւորութիւնը բաց թողուեցաւ», - ըսած է Գոչունեան:

Ուրի Ազգային ժողովի կողմէ, եւ այդ ընտրութեան ճիշդ նախօրեակին Սերժ Սարգսեանը ուզած է առ ոչինչ համարել իր նախագահութեան ամենասկզբնական շրջանին ստեղծուած եւ կատարուած նախաձեռնութեամբ ստորագրուած այս արձանագրութիւնները: Այսինքն՝ նախագահ Սարգսեանը ուզած է իր ղեկավարութեան, իր պաշտօնավարութեան տարիներու ժամկէտին մէջ պահել այս արձանագրութիւնները եւ չէ ուզած փոխանցել յաջորդ շրջանին»:

Մէկ այլ հարցի՝ Թուրքիոյ՝ թէ՛ ներքին կեանքի, թէ՛ տարածաշրջանային հակամարտութիւններուն մէջ ընդգրկուած ըլլալը արդեօք չի՞ չուշեր, որ հայ-թրքական յարաբերութիւնները բարելաւելու հարցն այլեւս շատ կը հեռանայ, եւ մօտակայ շրջանին դժուար թէ վերականգնուի այդ գործընթացը, Գոչունեանը պատասխանած է. - «Բնականաբար, ներկայ իրավիճակի մէջ դժուար թէ ըլլան մեծ փոփոխութիւններ այսպիսի քարացած հիմնախնդիրներու կապակցութեամբ, առաւել եւս, որ տարածաշրջանը ծանր իրավիճակի մէջ է, Թուրքիան յաջորդ տարի ընտրութիւններու պիտի երթայ, եւ նախընտրական տրամադրութիւնները արդէն հիմակուրէն զգալի են երկրի մէջ: Ասոր գումարած՝ Թուրքիոյ մէջ այս վերջին 15 տարիներուն, այսինքն՝ «Արդարութիւն եւ զարգացում» կուսակցութեան իշխանութեան տարիներուն, ազգայնական տրամադրութիւնները գազաթնակէտին հասած են, եւ այս ընդհանուր իրավիճակի տրամաբանութենէն չի բխիր Հայաստանի հետ յարաբերութիւններու բնականոնացման երթալը:

Այս պահու դրութեամբ դժուար թէ երկու հարեւան երկիր-

Կայացած է «Ժխտման Գործարարները» Ֆիլմի Երեւանեան Անդրանիկ Ցուցադրութիւնը

«Մոսկուա» շարժանկարի սրահին մէջ Մարտ 5-ին տեղի ունեցած է «Ժխտման Գործարարները» (Architects of Denial) ֆիլմի անդրանիկ ցուցադրութիւնը: «Մուփըման» ֆիլմաշարի հեռատեսիլային տարբերակի գլխաւոր դերակատար Տին Քէյնն եւ արտադրող Մոնթել Ուիլքըմս հայ հանդիսատեսին ներկայացուցած են Հայոց Յեղասպանութեան նուիրուած վաւերագրական ֆիլմը, որ նուիրուած է Թուրքիոյ, Ատրպէյճանի եւ Միացեալ Նահանգներու այն քաղաքական գործիչներուն, որոնք կը փորձեն խոչընդոտել Հայոց Յեղասպանութեան ճանաչումը:

Նախատեսուած է արդէն Հոկտեմբերին, իսկ մինչ այդ ֆիլմը ցուցադրուած էր Ուաշինկթընի մէջ՝ քաղաքական գործիչներու, փորձագէտներու եւ հայ համայնքի համար:

Ֆիլմին մէջ փաստավաւերագրական նիւթեր են, իրենց յուշերը կը պատմեն Մեծ Եղեռնը վերապրածները, Սուսուկայի թի, Պաքուի ջարդերէն փրկուածները, առաջադէմ փորձագէտներն ու քաղաքական գործիչները: Մանր տեսարանները կը զուգակցուին աղմկայարոյց բացայայտումներով:

Ֆիլմի երեւանեան ցուցադրութեան ներկայ գտնուած են նաեւ ՀՀ նախագահ Սերժ Սարգսեան եւ տիկին Ռիթա Սարգսեան:

Ֆիլմին համաշխարհային անդրանիկ ցուցադրութիւնը

Փառաշուք Համերգով Նշուեցաւ

Շարունակուած է 1-էն

Նաւորաբար Պեթհովէնէ Զրդ համանուագը:

Համերգի կազմակերպիչ յանձնախումբի ատենապետ Քէն Գէորգեանի բացման խօսքէն ետք օրհնութեան աղօթքը կատարեց Վեր. Արա Զաւարեան:

Այնուհետեւ, սոյն միջոցառումը կազմակերպող Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան եւ Լարք Երաժշտանոցի անունով, աւելի քան հազար հոգիներու առջեւ, ելոյթ ունեցաւ Տօթթ. Նազարէթ Տարագճեան: Ան ողջունել էր ներկայ հասարակութիւնը իր ուրախութիւնը յայտնեց 100-ամեակի այս մոցառումը բարեղէպ կերպով կը զուգարկի նաեւ Հայաստանի Հանրապետութեան հիմնադրութեան 100-ամեակին հետ: Տօթթ. Ն. Տարագճեան ամփոփ գիծերով ներկայացուց Հայ Աւետ. Ընկերակցութեան նշանակալից ներդրումները կրթական, մշակութային, կրօնական, բարեսիրական եւ այլ բնագաւառներու մէջ ի շահ հայ ժողովուրդի կարօտեալներուն: Իսկ անդրադառնալով Պեթհովէնի Զրդ համանուագին ըսաւ որ ան հանձարեղ յօրինողի ներաշխարհի արտայայտութիւնն է գոհաբանութեան, համաշխարհային սիրոյ եւ եղբայրութեան մասին: Աւարտին շնորհակալութիւն յայտ-

նեց Լարք Երաժշտանոցի նուագախումբին, երգչախումբին, օրուան մեներգիչներուն եւ յատկապէս տաղանդաւոր խմբավար Վաչէ Պարսումեանին:

Համերգն սկսաւ Անթոն Պրուքնըրի (1824-1896) Te Deum in C major ստեղծագործութեան կատարումով: Երկրորդ մասը յատկացուած էր Լուվիկ վան Պեթհովէնի Զրդ համանուագին: Աւելի քան մէկ ժամ տեւող սոյն կատարումը ներկաներու պատճառեց գեղարուեստական մեծ հաճոյք: Արդարեւ, սիմֆոնիք նուագախումբն ու արհեստավարժ երգչախումբը խմբավարութեամբ մանեթրօ վաչէ Պարսումեանի գեղեցիկ ընդելուզումով մը, մեզի հրամցուցին ներդաշնակ եւ սքանչելի համադրում մը, զոր վայելեցինք ու ըմբռնեցինք հոգեկան մեծ ապրումով ու գոհունակութեամբ:

Սոյն համերգի ճոխացման իրենց բարերար նպաստը բերին նաեւ տաղանդաւոր մեներգիչներ Շուշիկ Պարսումեան (սոփրանօ), կարինէ Աւագեան (մեցցօ սոփրանօ), Պերճ Գարագեան (թենոր) եւ Ապտիլ Գոնզալէզ (պաս):

Պատմական փառաշուք համերգ մըն էր արդարեւ, որուն համար ջերմօրէն կը շնորհաւորենք նախաձեռնողներն ու կազմակերպիչները:

Գ. ՄՈՂՈՅԵԱՆ

ները կարենան իրենց առաջնահերթութիւնները համընկեցնելու կէտին հասնին, ուստի իմ մեկնաբանութիւնը կամ կանխատեսումը



MARONIAN
INSURANCE SERVICES

Since 1975, we have proudly served our community's insurance needs.

CA Insurance Lic. #0C99815



WELCOME HOME & AUTO INSURANCE

Along with all of our other *Trusted Insurance Services*






We will shop you with over 20 A-rated companies to find the best fit for your needs and budget.

CALL US FOR A PERSONALIZED QUOTE

(818) 500 9305

Յիշատակելի Միջոցառումներ Սարգիս Զացյանեանի Մահուան Քառասունօրին Առթիւ



Անուանի քաղաքական գործիչ, վերլուծաբան եւ Արցախի հերոսական պայքարի ազատամարտիկներէն Սարգիս Զացյանեանի անժամանակ մահուան քառասունօրին առթիւ, անցեալ Կիրակի, Մարտ 4, 2018, տեղի ունեցան յիշատակելի միջոցառումներ: Հարաւային Գալիֆորնիոյ Հայաստանեայց Առաքելական վեց եկեղեցիներու մէջ, կատարուեցան հոգեհանգստեան արարողութիւններ, կազմակերպութեամբ Պոլսահայ եւ «Հայրենիք» Միութիւններու:

Նոյն օրը կէսօրէ ետք Լոս Անճելոսի Պոլսահայ Միութեան կեդրոնին մէջ Հրանտ Տինգի անուան սրահին կից, բացումը կատարուեցաւ Սարգիս Զացյանեանի անուան գրադարանին:

Այնուհետեւ ներկաները հրաւիրուեցան Միութեան գլխաւոր հանդիսարանը, ուր տեղի ունեցաւ Սարգիս Զացյանեանի նուիրուած յիշատակի հանդիսութիւն եւ հոգեճաշ:

Բեմին վրայ գետեղուած էին Սարգիս Զացյանեանի նկարները, ծաղկեպսակ մը եւ պաստառի վրայ իր հիւանդանոցային վերջին լուսանկարը:

Այստեղ եւս տեղի ունեցաւ հոգեհանգստ նախագահութեամբ Արժ. Տ. Սերովբէ Քհնյ. Ալանճեանի: Ան այս առթիւ զրուստեց հանգուցեալ Սարգիս Զացյանեանի բարեմասնութիւնները, որպէս նուիրեալ ու խիզախ հայրենասէր:

Գործադրուեցաւ օրուան պատշաճ յայտագիր մը հանդիսավարութեամբ «Հայրենիք» Միութեան հիմնադիրներէն եւ գործադիր մարմնի անդամ Յակոբ Ալեքսանեանի, որ իր հերթին ներկայացուց մեծ հայրենասէր Սարգիս Զացյանեանի կենսագրութիւնը:

Պոլսահայ Միութեան ատենապետ իրաւաբան Էտիկ Մինասեան ոգեկոչելով Սարգիս Զացյանեանի յիշատակը բնութագրեց անոր նկարագրային գիծերը, որպէս հաւատաւոր հայրենասէր եւ քաջարի ազատամարտիկ, որ արժանացած էր Պոլսահայ Միութեան «Հրանդ Տինգ» տարեկան մրցանակին եւ յարեց «Հերոս մըն էր որ կորսնցուցինք: Պիտի աշխատինք շարունակել իր աւանդ ձգած գործը»:

Կարդացուեցաւ Եռաբլուրի մէջ Սարգիս Զացյանեանի թաղման ժամանակ վահարած Գէորգեանի դամբանականը, ինչպէս նաեւ Հայաստանի Գուգարաց թեմի Առաջնորդ Գերշ. Սեպուհ Արք. Զուլճեանի ցաւակցականը:

Այս առթիւ սրտի խօսքով ելույթ ունեցան Տիկ. Վ. Տօնիկեան:

Իսկ «Հայրենիք» միութեան կողմէ Յակոբ Պաշմազեան: Ան համապարբակ ձեւով անդրադարձաւ հանգուցեալ Սարգիս Զացյանեանի տարբեր մակարդակներու վրայ ունեցած եւ բեղումնաւոր գործունէութեան մասին թէ որպէս ժողովուրդ:

Շար.ը էջ 19

Ուշադրութիւն, Ուշադրութիւն!

ՀԲԸՄ Սամեան թատերախումբի ներկայացման օրերը կը մօտենան: «Երկու Կնիկ, Մէկ էրիկ-Երկրորդ Մաս»-ի Առաջին ելույթը տեղի պիտի ունենայ Շաբաթ, 17 Մարտի երեկոյան ժամը 8:00-ին: Մի՛ փախցնէք այս բացառիկ առիթը եւ անմիջապէս ապահովեցէք ձեր տոմսերը: Տոմսի գինն է 30 տոլար:



Թաքսիի վարորդ Հայկազ Զաքարեանի դերը պիտի մարմնաւորէ Ռուբեն Հարմանտայեանը: Իր մէկ կնոջ՝ Արփիկի դերով հանդէս պիտի գայ Նարինէ Աւագեանը, իսկ միւս կնոջ՝ Թամարի դերով հանդէս պիտի գայ Արփի Սամուէլեանը:

Հայկազի վարձակալ Յակոբ Պարտիզպանեանի դերը պիտի մարմնաւորէ Արամ Մուրադեանը, իսկ անոր խնթուկ ալեհեր հօր դերով հանդէս պիտի գայ Գէորգ Քէշիկեանը: Ծիծաղաշարժ այս կատակերգութեան մէջ հանդէս եկող երիտասարդներուն դերերը վստահուած են Փիթըր Նշանին (Սեւակ) եւ Ալիսըն Քէշիկեանին (Շուշիկ):

Տոմսերը կարելի է ապահովել ՀԲԸ Միութեան գրասենեակէն (626) 794-7942, Ապրիլ գրասենեակէն (818) 243-4112, Պերճ գրասենեակէն (818) 244-3830, իսկ համացանցի վրայ՝ ITSMYSEAT.COM/YERGOU:



Armenian-American veterans on the steps of the U.S. Capitol after submitting a memorandum for the official recognition of the Republic of Armenia; Washington, D.C.; April 14, 1920. Courtesy of the State Archives of Armenia

Celebration of 400 Years of Armenian-American Heritage, 1618 - 2018

The Ararat-Eskijian Museum (AEM), the National Association for Armenian Studies and Research (NAASR), Project SAVE Armenian Photograph Archives, the Armenian Genocide Museum-Institute (AGMI) in Yerevan, Armenia, and the California State University Northridge Armenian Studies Program are pleased to announce an upcoming conference dedicated to the 400th anniversary of the arrival of the first Armenian to America, 'Martin the Armenian' (Virginia, 1618). This conference will focus on the history and legacy of the Armenian-American community and its significant accomplishments from very humble beginnings.

Friday, March 16, 2018 Saturday, March 17, 2018

Master of Ceremonies: Marc A. Mamigonian

Master of Ceremonies: Marc A. Mamigonian

Opening Reception 6:00 PM to 7:00 PM
Featuring Chookasian Folk Ensemble

Conference 9:30 AM to 5:00 PM

Program 7:00 PM to 10:00 PM

Joseph Ryland

Performance of his solo play "Sojourners"

Dr. Mary Papazian

Keynote Speaker

Dr. Hayk Demoyan

Unveiling and presentation of his new illustrated book on Armenian-Americans, "Armenian Legacy in America: A 400-Year Heritage"

Peter Musurlian

Screening of short documentary film on Armenian-Americans in politics

Ludwig Manukian

Staging of Leon Surmelian's play, "I Ask You, Ladies and Gentlemen"

Vatche Mankerian (discussion and piano) with **Garineh Avakian** (vocals)

Musical presentation of the Art Songs of Alan Hovhanness

Special exhibition featuring Armenian-American heirlooms and historical artifacts

Location:
Ararat Home of Los Angeles
George Deukmejian Community Center
15105 Mission Hills Road
Mission Hills, CA 91345

For information:
Ararat-Eskijian Museum (747) 500-7585
E-mail: Eskijian@ararat-eskijian-museum.com
Open to the public, free admission
Friday, complimentary parking / Saturday, parking \$8.00

I: Early Armenian Life and Community Building Efforts in America

- Hayk Demoyan:** Return or Stay? Armenian Emigration to America and Repatriation in the Late 19th to Early 20th Centuries
- David Gutman:** Armenian Migration to North America, State Power, and Local Politics in the Late Ottoman Empire
- Ben Alexander:** The Armenian-American Community and the Paradox of Partisanship

II: Identities of the New Community

- Harry S. Cherken Jr.:** Assimilation and Whiteness: A Consideration of the United States v. Cartozian
- Gregory Aftandilian:** World War II as a Transformative Period for the Armenian-American Community
- Vartan Matiossian:** The Early Times of the Armenian-American Press

•**Special Guest Speaker: Prof. Richard Hovannisian:** From Ambivalence to Assertion: An Armenian-American Passage

Lunch Break 1:00 to 2:15 PM

III: Armenian-American Art, Film and Literature

- Heghnar Zeitlian-Watenpaugh:** Toros Roslin in America: Medieval Armenian Gospels in U.S. Museums
Թրքական ապրանք գնող «հայ»երը երբեք չեն մտածէր որ այդ թրքական լոլիկի մածուկին մէջ մեր մորթուած նախահայրերուն արիւնը կայ: Անոնք չեն մտածէր որ այդ բամպակներուն թէ ոսպին, սալորներուն թէ ծիրանի անուշներուն եւ չոր պտուղներուն ծառերը իրենց արմատները մխրձած են մեր նահատակներուն անթաղ ոսկորներուն շուրջ: Այս «հայ»երը չեն տեսնէր որ իրենց թրքական ապրանքները գնելով, թուրքին տնտեսութեան կ'օգնեն, եւ այդ դրամներով, թուրքը թէ ատրպէյցճանցին, գէնք ու գինամթերք կը գնէ որպէսզի հայ գինուորները սպաննէ, որպէսզի Հայաստանը քանդէ, որպէսզի մեր մայրերն ու կիները, մեր քոյրերն ու մանուկները բռնաբարէ, լլկէ:

«Հայ»երուն թրքական ապրանք գնելու - չգնելու հարցով քանի մը անգամ արտայայտուած եմ Լոս Անճելըսի մամուլին եւ Հայաստանի քանի մը թերթերուն մէջ ինչպէս նաեւ հեռատեսիլի վրայ: Ոչ մէկ արդիւնք: Ես գարմանալով կը գարմանամ որ ինչու՞ Հայաստանի կառավարութիւնը չեւարթիլէր թրքական ապրանքներուն ներածումը: Եթէ վաղը Հայաստանի եւ թուրքիոյ սահմանները բացուին, Հայաստանի տնտեսութիւնը «հապը կ'լլած է»: «Հայ»երը, մանաւանդ Հայաստանի մէջ, պիտի տասնապատկեն իրենց ներածումները թուրքիայէն եւ այս-

պէսով, բնականաբար, պիտի տուժէ հայկական տնտեսութիւնը - գործարանները, այգիները, երկրագործական արտադրութիւնները, հազուստեղէնի շուկան, եւ այլն: Չէ՞ որ մենք ազատամիտ ժողովուրդ ենք..., մենք ցոյց պիտի տանք թուրքին որ մենք կրնանք «եղբայրաբար» ապրիլ մեր դարաւոր «դրացի»ին հետ: Վերջ ի վերջոյ, թուրքերը արեւմտահայերուն ջարդեցին եւ արեւմտահայաստանը գրաւեցին, ոչ թէ արեւելահայաստանը...: Եթէ օր մը թուրքերը որոշեն հայկական մեր հողերը վերադարձնել, նիւթական հատուցում կատարել, արդէն արեւմտահայ մնացած չ'ըլլար եւ ամէն բան հայաստանցիներուն կեւերթայ ...:

Միրելի Երիտասարդներ, Ես կոչ կ'ընեմ ձեզի որ այս տարի ձեր պայքարի ոճը փոխէ՛ք: Փոխանակ Հոլիվուտի մէջ գանգուածային ցոյց կազմակերպելու, կեւառաջարկեմ որ շատ լաւ կազմակերպուած, հայկական նպարատուներու առջեւ հաւաքներ կազմակերպէք, իւրաքանչիւր նպարատան առջեւ քանի մը հարիւր երիտասարդներով, եւ պահանջէք այդ նպարատան տիրոջմէն որ ալ թրքական ապրանք չ'ներածէ:

Ցոյցերը տեղի պէտք է ունենան Փաստօրէնայի, Կլինտոնի, Հոլիվուտի, Նորթ Հոլիվուտի, Պըրպէյքի, Տուարթի, Քանոկա Փարքի եւ միւս քաղաքներուն բոլոր հայկական նպարատուներուն առջեւ: Այսպէսով նաեւ Հոլիվուտէն դուրս ելած կ'ըլլանք եւ այդ քանի մը քաղաքներուն օտարներն ալ մասամբ տեղեակ կ'ըլլան մեր դատին:

Բնականաբար լաւ մտածուած պատարներ ալ պէտք է պատրաստուին, ցնցիչ լոզունգներով - «վերջ թրքական ապրանքներուն», «արիւն կայ այդ մածուկին մէջ», «յարգենք մեր նահատակներուն

Շար.ը էջ 18

Unity Concert DEDICATED TO THE ARMENIAN GENOCIDE THE HOLOCAUST AND SLAVERY IN LOVING MEMORY OF CHRISTIAN SHAHNAZARIAN SUNDAY, MARCH 25, 2018 300 E. Colorado Blvd., Suite 200, Pasadena, CA 91101 Refreshments & Hors D'oeuvres Social Hour 2:00-3:00pm • Concert 3:00-5:00pm ALAN CHAPMAN PIANIST VACHE MANKERIAN PIANIST YIN YIN HUANG PIANIST ALLESONNE CRAWFORD VOCALIST KAREN BENJAMIN VOCALIST ARPY AINTABLIAN SOPRANO LING YAN CELLIST JONATHAN WEI VIOLINIST FOR TICKETS & INFO CONTACT: DONATION \$35 Nat Nehdar: 626-437-1354 nnehdar@aol.com Vahe Atchabahian: 626-354-5924 vamedia@yahoo.com 90-MINUTE FREE PARKING VALIDATION

ԳԵՈՐԳ Ե. ԿԱԹՈՂԻԿՈՍԵՆ ԵՏՔ ԻՆՉ ԵՂԱՆ ԵՐԵՒԱՆԻ ՅԱՅ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԵՐԿՈՒ ՏԱՍՆԱՄԵԱԿՆԵՐՈՒՄ Ս. ՊՕՂՈՍ-ՊԵՏՐՈՍ ԵՒ Ս. ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

ԴՈԿՏՈՐ ԶԱԻԵՆ Ա. ՔՅՆՅ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Վեց եկեղեցիներու ճակատագիրը

Տ.Տ. Գէորգ Ե. Սուրենյան Ամենայն Հայոց Կաթողիկոս վախճանեցաւ 1930 թուի Մայիսի 8-ին, եւ հազիւ ամիս մը անցած Երեւանի հնագոյն եկեղեցիները քանդուելու վտանգին ենթարկուեցան Հայաստանի համայնավար կառավարութեան հրահանգով: Կը սպասէին Հայրապետի մահուան կարենալ ձեռնարկելու այդ ոճրապարտ արարքին:



Երեւանի Սուրբ Պօղոս-Պետրոս՝ եկեղեցին քանդուած 1930-ին (այժմ Մոսկուա Պատկերասրահ)

924 թուին Երեւանի մէջ կային գործող վեց հայ եկեղեցիներ՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ, Ս. Պօղոս-Պետրոս, Ս. Կաթողիկէ, Ս. Սարգիս, Ս. Զօրավար եւ Ս. Յովհաննէս: 1930-ի Յունիս եւ Յուլիս ամիսներուն կայացած Համայնավար Կուսակցութեան 16-րդ համագումարը վերահաստատեց Լենինի վճռական դիրքն ու հրահանգը կրօնքին եւ եկեղեցիին հանդէպ, յայտարարելով որ «Կուսակցութիւնը պէտք է ամրապնդի եւ զարգացնի կրօնի յետադիմական ազդեցութիւնից ազատագրումը»: Որպէս անմիջական հետեւանք իսկոյն եկեղեցիներու քանդումն ու փակումը շարունակուեցան որքան ատեն որ հակապետական քաղաքականութիւնը կ'ամրանար երկրին մէջ:

Սուրբ Պօղոս-Պետրոս Յնագոյն եկեղեցին

Եկեղեցիներու քանդումն ու բռնագրաւումը հետապնդելու լուրջ քայլեր սկսան առնուել ինչպէս Խորհրդային Միութեան երկիրներուն մէջ, նոյնպէս նաեւ Հայաստանի մէջ, ուր ծրագրեցին եւ գործադրեցին Երեւանի չիշեալ Ս. Պօղոս-Պետրոս եւ Ս. Կաթողիկէ հնագոյն եկեղեցիներուն քանդումը: Առաջին առնելու համար այդ ոճիրին, Հայաստանի պատմական յուշարձաններու պահպանութեան յանձնաժողովի նախագահ եւ յայտնի ճարտարապետ Ալեքսանդր Թամանեան, որ նոյն տարիներուն ներկայ Երեւան քաղաքի ընդհանուր, հոյակապ, համապարփակ եւ լիակատար ճարտարապետական նախագիծը պատրաստողը եղաւ, զգալով գալիք վտանգը, երկու նամակներով գրեց 1930 Փետրուար 6 եւ Մարտ 2 թուակիր իրեն հետ գիտաշխատող ընկերոջ Աշխարհաբեկ Քալանթարեանի հետ միասին, դի-

մելով Հայաստանի լուսաւորութեան կոմիտէի նախագահ Ա. Եղիազարեանին, բացատրելով թէ ինչ մեծ սխալ պիտի գործուէր քանդելով Ս. Պօղոս-Պետրոս եկեղեցին որ «կառուցուած է 1679 թուի մեծ երկրաշարժից անմիջապէս յետոյ»:

Նամակները կը հաստատէին թէ «Սուրբ Պօղոս-Պետրոս եկեղեցին ամենահին շէնքերից մէկն է», զգուշացնելով որ եկեղեցին իր վրայ պատմական բազմաթիւ արձանագրութիւններ եւ քանդակներ ունէր, «եւ իր ամբողջութեամբ ներկայացնում է 17-րդ դարում հայ ճարտարապետական պատկե-

րը»: Յանուն յուշարձաններու պաշտպանութեան յանձնաժողովին, թամանեան եւ Քալանթարեան կը խնդրէին որ այդ քայլը չառնուէր, եւ եկեղեցին որ կառուցուած էր Երեւանի Աբովեան փողոցին վրայ՝ չքանդուէր, «մանաւանդ որ նրա կանգուն մնալը չի խանգարում նրա շուրջը քաղաքացիական շէնքեր կառուցելու»:

Ի պատասխան գրուած նամակներուն Ալեքսանդր Թամանեան կը ստանար անբարեխիղճ գրութիւն մը ըսելով որ թէեւ Ս. Պօղոս-Պետրոս եկեղեցին Երեւան քաղաքի յատակագիծին եւ ընդհանուր ճարտարապետական ծրագրին արգելք չէր հանդիսանար, «սակայն այդ դեռ չի նշանակում որ քաղաքային կարող է հանդուրժել որպէսզի այդ եկեղեցին կանգուն թողնուի իր շրջակայքի կառուցուելիք նոր տների մէջ»: Պետութիւնը ամէն բանէ վեր «չէր հանդուրժեր» եկեղեցիներու ներկայութիւնը, մնաց որ անոր հոգը ըլլար թէ ինչ հարստութիւն, կրօնական ինչ սրբութիւն, ճարտարապետական ինչ կոթողներ պիտի քանդուէին իրենց հիմերէն, քանդելով նաեւ հայ քրիստոնեայ ժողովուրդին հոգեւոր եւ բարոյական կապը այդ սրբավայրերուն հետ:

Եկեղեցիներուն Տխուր ճակատագիրը

Հակառակ եղած միջազգային արուեստագէտներու արգելքին, անոնք Ս. Պօղոս-Պետրոս եկեղեցու ներքին նկարազարդումները եւ արտաքին քանդակները անկրկնելի արուեստի գործ նկատեցին եւ շատ ջանացին Հայաստանի կառավարութեան մտքէն հեռացնել եկեղեցին քանդելու անարգ որոշումը, ներքին արուեստի գործերը զգուշութեամբ հանուելէն ետք նոյնիսկ:

Սակայն ամէն ինչ ի գուր անցաւ, եւ 1930 Նոյեմբեր 6-ի Երեւանի քաղաքային խորհուրդի նիստին որոշեցին քանդել գայն, «նկատի առնելով որ այդ եկեղեցու շէնքը չունի ոչ մի ճարտարապետական արժէք», եւ իսկոյն քանդեցին գայն:

Երեւանի միւս երկու եկեղեցիները եւս, Սուրբ Լուսաւորիչն ու Սուրբ Կաթողիկէն վտանգուեցան, եւ 1931 Օգոստոս 18-ին Վաղարշապատի շրջանի քաղաքային նախագահ Լ. Վարդուհի կոչեցեալը դիմելով Մայր Աթոռի Գերագոյն Հոգեւոր Խորհուրդին պահանջեց Երեւանի Սուրբ Կաթողիկէ եկեղեցիին բանալիները: Մայր Աթոռու Տեղակալ Խորէն Արքեպիսկոպոս Մուրադբէկեան մերժեց պահանջքին ընթացք տալ, քաջ գիտնալով որ պետութիւնը եկեղեցին գրաւելով պիտի յանձնէր հետեւալ եւ մահամերձ «Ազատ եկեղեցականներուն»: Տեղակալը «ամէն գնով որոշեց պահպանել եկեղեցին անարգելուց», առարկելով որ Մայր Աթոռը ինք պիտի բանակցի կառավարութեան հետ եւ հասկցնէ պահանջքին անօրէն եւ անարդար ըլլալը: Օգոստոս 27-ին պետու-

չող անաստուածների միութեան» կեդրոնական խորհուրդին: Այս ձեւով Երեւանի կեդրոնական երեք հայ եկեղեցիներէն երկուքը՝ Ս. Պօղոս-Պետրոսն ու Ս. Կաթողիկէն կը քանդուէին եւ միւսը՝ Ս. Լուսաւորիչը բունի կը յանձնուէր Մայր Եկեղեցույ դէմ ապստամբող հերձուածողներուն եւ անաստուածներուն:

Տեղակալ Խորէն Արքեպիսկոպոսի Դիմումը

Հակառակ այս բոլորին կորովի Խորէն Արքեպիսկոպոս 1931 Սեպտեմբեր 10-ին, յատուկ նամակով կը դիմէր կառավարութեան պնդելով որ «չիշեալ եկեղեցին հանգած չպիտի համարել», պատճառաբանելով անոր երկու տարիներու չգործածուելը որուն իսկական պատճառը պետութեան պարտադրած անտանելի տուրքն էր եւ քահանայից դէմ շղթահալը ծրագրուած հալածանքը: Տեղակալ Խորէն Արքեպիսկոպոս յանուն Մայր Աթոռի կ'առաջարկէր Ս. Կաթողիկէ եկեղեցին իր համայնքին վերադարձնել եւ չգրաւել Ս. Լուսաւորիչ եկեղեցին, որոնց նկատմամբ քաղաքային



Երեւանի Ս. Կաթողիկէ եկեղեցիի քանդումը 1936-1937

Թիւնը կրկին պահանջեց եկեղեցու քանալիները, պատրուակելով որ եկեղեցին երկու յաջորդական տարիներու ընթացքին չէր գործածուած կրօնական համայնքին կողմէ, եւ թէ պետական օրէնքով նման շէնք մը «համարուած է փակուած»:

Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի Միջամտութիւնը

ԳՀԽ-ը 1931 Սեպտեմբեր 1-ին Երեւան ուղարկեց Գէորգ Արքեպիսկոպոս Չորեքճեանը կառավարութեան հետ բանակցելու համար եղած պահանջքին դէմ, սակայն ղեկավարութիւնը չընդունեց զինք, պատրուակելով որ երկրին նախագահն ու տեղակալը կը բացակայէին քաղաքէն: Անդին, Երեւանի Ս. Կաթողիկէ եկեղեցույ ճակատագիրը վճռած էին արդէն Օգոստոս 30-ին, «վարչական կարգով բանալով եկեղեցին եւ կազմել համապատասխան ակտ եւ յանձնել գայն Ազատ եկեղեցականներին»: Սա կը նշանակէր առանց բանալիները ունենալու եկեղեցույ դռները բունի կերպով խորտակելու եւ շէնքին տիրանալու: Իսկ Սուրբ Լուսաւորիչ եկեղեցին, որ արդէն իսկ յանձնուած էր հետեւալ խումբին, որոշեցին ոչ թէ վերադարձնել իրաւատիրոջ՝ Մայր Աթոռին, այլ «տրամադրել մարտն-

խորհուրդի նախկին նախագահ Սեդրակ Մարգարեան «խոստացել էր թոյլատրել» գոնէ Ս. Լուսաւորիչ եկեղեցույ մէջ հրաւիրել տալ Մայր Եկեղեցույ հաւատացեալները «համայնական ժողով գումարելու եւ յայտնաբերելու համայնքին կամքը եւ ըստ այնմ տրամադրելու չիշեալ եկեղեցին»:

Նոյն առիթով Տեղակալ Սրբազանը իր նոյն նամակը կը փակէր հարց դնելով Հայաստանի կառավարութեան թէ ինչ էր պատճառը որ այդքան մեծ արժէք կը տրուէր հերձուածողներուն որոնք «անարգուած են թէ՛ համամիութենական հայ հաւատացեալների եւ թէ՛ գաղութահայութեան կողմից», տակաւին հաշուի չառնելով միլիոնաւոր հայ հաւատացեալներու կապը Ս. Էջմիածնի Ընդհանրական Հայրապետութեան հետ»:

Անպատկառ Մերժում եւ Կաթողիկէ Եկեղեցույ Քանդումը

Հայաստանի իշխանութիւնները մերժեցին եղած խնդրանքն ու տրուած բացատրութիւնները ու պաշտօնականացուցին իրենց ապօրինի գրաւումներն ու փոխան-

ՄՆԱՅԷՔ ԱՅՍՏԵՂ

Ն. ԹՈՒՒՍԻԿԵԱՆ-ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ
ՅՈՎԻԱՆՆԵԱՆ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ
ՔԱՆՈՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՏՐՈՆ

1912-13թթ. հայու թիւը համազգային մասշտաբով նշում էր գրեթէ 1500 եւ հայոց գրատպութեան 400 ամեակները: Չունենալով ազգային պետութիւն, հայու թիւը աներեւակայելի արժանապատուութեամբ եւ երախտագիտութեամբ էր նշում մեծ տարեդարձերը: Արեւմտահայութիւնը եւ արեւելահայութիւնը դարձել էին, այսպէս ասած, մէկ ամբողջութիւն, մէկ հայութիւն, մէկ ազգ: Դա համազգային զարթոնքի շրջան էր: 1912-ը, բառի բուն իմաստով, վերածնունդի տարի էր նաեւ Թուրքիայի համար: 1912թ. Մարտի 20-ին Պետերբուրգի դատարանը չապացուցուած համարեց նրա մեղքը եւ արդարացրեց: Այլապէս սպասուած էր Սիպրի, կամ ... Ուրեմն՝ ֆիզիքական առումով սա իրապէս կարելի է վերածնունդ համարել:

Թուրքիայի ազատութեան լուրը մեծ խանդավառութիւն առաջացրեց հայկական շրջանակների մէջ եւ մոտակա բնաստեղծ Ալեքսանդր Մատուրեանը խնդրեց Թուրքիայի մինչեւ թիֆլիս մեկնելը անցնել Մոսկուա՝ տեղի հայ մտաւորականութեանը հանդիպելու համար: Թուրքիայի չմերժեց: Աւագ որդին՝ Մուշեղը հօրից անբաժան էր:

«Իսկապէս հայրիկը էստեղ մեծ գործի վրայ է... Հայրիկը էս 400-ի տօնին շատ բաներ է մտադիր անել, էստեղ Պետերբուրգի ու Մոսկուայի հայերից ուղղում է մի բան սարքել, մի ֆոնտ: Իհարկէ, շատ է ոգեւորուել... Ամէն օր մի տեղ են լինում՝ թատրոն, ցուցահանդէս, գրական մանկական հանդէս, կոնժաբանութիւն, այցելութիւններ եւ այլն»: (Մ.թ. ., Ապրիլի 5-ին ընտանիքին գրած նամակից):

Թուրքիայի համոզուած էր, որ այս փառահեղ առիթները կարող են փոխել հայութեանը, նոր որակ հաղորդել նրան, մեկնարկային մի նոր փուլ հանդիսանալ ամբողջ ազգի համար:

«Սրանից էլ լաւ դէպք չի կարող լինել, որ մենք էլ ազգովին մի շարժուենք գիտութեան համար: Ախր շատ ենք անգէտ ու կոյր-գիւղից մինչեւ քաղաք, հոգեւորական-աշխարհական, գրող ու ընթերցող տգէտ, տգէտ, ամէն բանից, սկսած մեզնից, մեր պատմութիւնից, մեր կեանքից...»: (Յօդուածների առիթով Գալուստ Տէր-Մկրտչեանին գրած նամակից 1912, Մայիս 25):

Հաւատալով բարեբեր զարթոնքին՝ Յովհաննէս Թումանեանը նախաձեռնում է գրական մի կառույցի հիմնադրումը: Եւ արդէն 1912-ի Հոկտեմբերին թիֆլիսում պաշտօնապէս մեկնարկում է Կովկասի հայոց գրական ընկերութեան գործունէութիւնը՝ նախագահութեամբ պարոն Յովհաննէս Թումանեանի:

Կովկասի հայոց գրական ընկերութեան հիմնադրումից մէկ տարի անց Պոլսում վախճանուում է քաղաքական գործիչ Սիմոն Զաւարեանը: Նրա դին թիֆլիս ուղեկցող թափօրի մէջ էր նաեւ Ատոմ Եարճանեան-Սիւսանյանը:

Վերջինս առաջին անգամ էր թիֆլիսում: Սա արեւելահայութեան համար ճիշտ նոյն նշանակութեան քաղաքն էր, ինչ Կոստանդնուպոլիսը՝ արեւմտահայութեան: Սիւսանյանը ծանօթանում էր քաղաքին, հայութեան կեանքին, շփուած մտաւորականների հետ: Յովհաննէս Թումանեանի նախաձեռնութեամբ Ատոմ Եարճանեանը ընդունուում է Կովկասի հայոց գրական ընկերութեան շարքերը: Նրան այստեղ առանձնաշատուկ կերպով են պատուում:

«...Եւ առանձին հաճոյքով ուղում եմ յիշատակել, որ տաճկահայ գրականութեանը նուիրուած էս երեկոյթին ներկայ է տաճկահայ գրականութեան ինքնատիպ ու տաղանդաւոր ներկայացուցիչներից մինը՝ մեր ազգային վշտի ու կորովի ուժեղ երգիչը, Պ. Ատոմ Եարճանեան-Սիւսանյանը, որին յայտնում եմ մեր սէրն ու յարգանքը»: (Յ.թ.)

Եարճանեանը այնքան լաւ էր իրեն զգում թիֆլիսում: Յովհաննեան դպրոցի քառաձայն երգչախումբը՝ կոմպոզիտոր Ահքէն Տիգրանեանի ղեկավարութեամբ, վաճարած ֆապագեանը՝ Դանիէլ Վարուժանի եւ պատուավոր հիւրի բանաստեղծութիւնների ընթերցմամբ, Նուարդ Թումանեանի ուղեկցութեամբ մեծ դերասանուհի Սիրանուշի հետ հանդիպումները, ընդհանրապէս այն ջերմ վերաբերմունքը, որ գտաւ նախեւառաջ Կովկասի հայոց գրողների ընկերութեան ղեկավարի շնորհիւ, անչափ յուզել էին նրան: «Մնացէք թիֆլիսում»: Սա թերեւս ամէնից յաճախ հնչող ցանկութիւնառաջարկն էր Սիւսանյանին: Բայց իր փոխարէն նա այստեղ թողեց Թումանեանին ընծայագրուած բազմաթիւ գրքերը եւ յստակ որոշեց լքել թիֆլիսը: Դրա համար նա թէ անձնական եւ թէ անանձնական պատճառներ ունէր: Այս քաղաքում էր ապրում իր երբեմնի սէրը՝ այն աղջիկը՝ Սաթենիկ Զաղեթեանը, որ թերեւս առաջին անգամ նոր է


գեղեցիկ զգացողութիւնների աղբիւր է եղել իր համար: Թիֆլիսը արթնացրեց Սաթենիկի հետ կապուած վերջուշը՝ իրենց առաջին հանդիպումը Լոզանի կայարանում, լուսանկարը, որ փաստորէն թուցրել էր աղջկանից եւ պահել իր մօտ որպէս թալիսման, օրիորդի նամակները, իր ապաքինուելը, որի մէջ երեւի թէ ամենամեծ բաժինը իր սէրն էր եւ իրեն սիրուած զգալու գորաւոր զգացողութիւնը: Մտքերը նրան մերթնետում էին Լոզան, մերթ տանում Պոլիս: Սաթենիկից բաժանուելուց վեց-եօթ տարի անց Պոլսում նա գտել էր իր նոր սիրոյն՝ պոլսեցի արուեստագետուհի Մաննիկ Պէրպէրեանին: Եւ հիմա թիֆլիսում յայտնուել էր գեղեցիկ սէր-իրականութեան եւ գեղեցիկ սէր-իրականութեան միջեւ:

Եւ յանկարծ, տարիների բաժանումից յետոյ, թիֆլիսում, կարծեմ Արտիստական թատրոնում, Սիւսանյանը հեռուից նկատեց օրիորդ Զաղեթեանին: Սիրտը մի պահ պոկուեց տեղից: Նա առանց մտածելու մօտեցաւ: Աւելի ճիշտ, անգիտակցօրէն կամ ինքնաբոլոր գնաց աղջկայ ուղղութեամբ, թէեւ վերջինս մենակ էր: Յետոյ պարզուեց, որ ընկերուհու՝ Նուարդի՝ Յովհաննէս Թումանեանի դաստիարակ էր:

- Սաթենիկ, - այսպէս էր կոչում պոլսեր Սաթենիկին, - օրիորդը շրջուեց, ճանաչեց իր դիմաց կանգնած տղամարդուն, լայն ժպտաց եւ անմիջապէս զգաց նրա յուսախաբուութիւնը:

- Ներեցէք, - մեծ դժուարութեամբ արտաբերեց Ատոմը, ես սխալած եմ:

- Այնքան էլ չէք սխալուել, պարոն արճանեան, ես Սաթենիկի փոքր քոյրն եմ: Հակառակի պէս այդ օրը Սաթենիկը թատրոն էր եկել հիւանդ լինելու պատճառով: Ներկայացումից յետոյ Սիւսանյանը աղջիկներին ուղեկցեց տուն: Ինչ-որ



նուրբ եւ հանդարտ տրամադրութեան մէջ էր նա: Ինչ-որ բան էր կատարուում հետը՝ տաք, աննման, հաճելի եւ նորմալ բան: Արդէն հասել էին տան շէմքին: Ներս մտնելու անկեղծ արուած հրակէրը Ատոմը մերժեց: Հաւանաբար, հոգու խորքում շնորհակալութիւն յայտնելով Սաթենիկին, որ այդ օրը չէր եկել թատրոն, եւ ներողութիւն խնդրելով Մաննիկից՝ իր մարդկային թուլութեան համար:

Նա հեռացաւ թիֆլիսից, քանի դեռ անազնիւ էր գտնուել ինքն իր նկատմամբ:

Մի քանի օրով յետաձգեց ճամբորդութիւնը, քանի որ լսել էր, թէ ծովը փոթորկում է: «Սեւ ծովը արեւմտեան է, չեմ ուզեր ճանապարհուիլ, որ ձեր ձուկերը... տաղանդաւոր չըլլան»:

Ուր էլ որ ճամբորդեց Ատոմ Եարճանեանը, նրան խնդրեցին մնալ եւ ստեղծագործել այդտեղ՝ թիֆլիսում, ինչը բազմիցս կրկնեց Յովհաննէս Թումանեանը, Եւրոպայում... հեռու Պոլսից: Երանի թէ լսէր:

«Պիտի երթամ. իմ իններս հոն են»:

1915թ. մնացել էր շատ քիչ ժամանակ:

Ուշադրութիւն. երբ ամեակները վերաբերի մէկէ աւելի թիւերու, ապա ան չի միանար այդ թիւերէն ո՛չ մէկուն՝ 400 եւ 500 ամեակները:


ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
* \$50,00 * \$100,00 (first class) for USA
\$ 125,00 (Air Mail) for Canada.
\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: _____
Address: _____
City: _____ State: _____ Zip Code: _____
Country: _____
Tel: _____ Email: _____

VA Print Media
Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքերու Տպագրութեան եւ
Հին Գիրքերու Նորոգութեան Համար
Հեռաձայնէ՛ վԱՀԻ ԱԶԱՊԱՀԵԱՆԻՆ



Vahe Atchabahian
1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104
Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com

ՆԵՐՂԱՇՆԱԿ ԿՆՈՋ ԿԱՆՈՆՆԵՐԸ

- Ամէն ինչ հնարաւոր է: Մենք գիտակցութեան հնարաւորութիւնները կ'օգտագործենք առաւելագոյնը 5%-ով: Սակայն մէկ անձի 100% ներուժը չի կրնար հաւասար ըլլալ այլ անձի մը 100% ներուժին: Մէկը կրնայ երկրի նախագահ դառնալ, միւսը՝ մասնաւոր ձեռնարկութիւն գլխաւորել: Ընդ որում, երկրորդին բացարձակ չի հետաքրքրեր երկիր ղեկավարելը: Այնպէս որ, ամէն բան չէ որ հնարաւոր է, գոյութիւն ունին տարածութեան անխախտելի կանոններ, որոնք հնարաւոր չէ փոխել, օրինակ՝ երկինքը միշտ վերն է, երկիրը՝ վարը:

- Ներդաշնակ կիրնը չի վախնար դէմքը կորսնցնելէն: Ան կրնայ ապրիլ առանց դիմաշարդարման, չի վախնար հիւանդ կամ յոգնած տեսք ունենալէն: Ասոնք հոգեպէս առողջ մարդու բնական վիճակներ են:

- Ներդաշնակ կիրնը ինքզինք կատարելութիւն չի համարեր: Ան գիտէ իր ուժեղ եւ տկար կողմերը, կը հասկնայ, որ թուլութիւնը ուժի հակառակ կողմն է: Իսկական կատար

ելութիւնը մութ եւ պայծառ, ներքին եւ արտաքին կողմերու կատարեալ հաւասարակշռութիւնն է:

- Ներդաշնակ կիրնը չի փորձեր ազդել մտերիմներու եւ ծանօթներու վրայ: Ան կը հասկնայ, որ կարելի է փոխել վերաբերմունքը միայն մարդոց եւ հանգամանքներու հանդէպ, իսկ ազդել կարելի է միայն սեփական գիտակցութեան վրայ, այդ պարագային աշխարհի հանդէպ վերաբերմունքը այլ պիտի ըլլայ: Տարածութեան կառուցուածքը փոխելը անհնար է: Փոխարէնը կարելի է փոխել «գիտակցութեան կառուցուածքը» ու իրականութեան սեփական ընկալումը:

- Ներդաշնակ կիրնը ինքզինք փերի, աստուածուհի կամ կախարդ չ'անուաներ: Անոր համար ինքզինք կիրն զգալը միանգամայն բաւարար է: Այն ամէնը, ինչ տեղի կ'ունենայ անոր շուրջ, պատճառահետեւանքային կապի արդիւնք է, ոչ թէ՛ կախարդանքի: Այս իմաստով՝ կանացիութեան կատարելութեան եւ անձնական ուժի հետ աշխատանք:

ԿԱՆԱՆՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԲՈԼՈՐ ԵՐԱՆՔՆԵՐԸ

Երբ կը պարզուի, որ դուք շատ կամ քիչ ընկերներ ունիք, արժէ մտածել՝ արդեօք դուք ճիշդ կը շփուիք, չկա՞ն արդեօք ձեր յարաբերութիւններուն մէջ սովորութիւններ կամ հարկադրանք: Նշուած դրոյթները պիտի օգնեն ձեզի հասկնալու.

1) Դուք պէտք չէ ընկերութիւն ընէք միայն անոր համար, որ համադասարանցիներ էք: Դուք իրար կողք կը նստէիք երկու տարի եւ ընկերուհիներ կը համարուէիք, իսկ այժմ ան ինքզինք տարօրինակ կը պահէ ու սխալ բաներ կ'ըսէ: Ուրեմն, նախընտրելի է չչփուիլ այլեւս:

2) Անոր հետ ուրախ է, սակայն ընկերութիւն ընելը՝ դժուար:

Այո, ան հետաքրքրական է, սակայն միշտ մէկ ժամ կ'ուշանայ հանդիպումէն, իսկ ատիկա արդէն այդքան ալ գուարճալի չէ:

3) Գործընկերները յաճախ ընկերներ կը համարուին: Առնուազն այն պատճառով, որ շատ ժամանակ միասին կ'անցընէք, կը շփուիք, կը ճաշէք եւ այլն: Այդքան ալ վատ տարբերակ չէ:

4) Եթէ անոնցմէ կը բողոքէք, մի՛ ընէք ընկերութիւն: Ո՛չ մէկուն հաճելի է, երբ ընկերները մշտապէս կը բողոքեն իրարմէ:

Աւելի լաւ է դադարէ շփուելէն:

5) Աւելի լաւ է քիչ ընկեր, բայց մտերիմ: Ծիծաղելի է, երբ մէկուն ընկեր կ'անուանես, սակայն դժուարութեամբ կը յիշես զինք:

6) Հարկադրուած ընկերութիւն մի՛ ընէք: Եթէ ձեզի համար



հետաքրքրական չէ տուեալ մարդու հետ, մի՛ ստիպէք ձեզի ընկերութիւն ընել: Ընկերութիւնը պարտականութիւն չէ:

7) Կը մնան միայն լաւերը: Դուք կը յիշէք, երբ ծանօթացած էք եւ միշտ ուրախ էք միասին: Հիանալի է:

8) Ո՛չ իւրաքանչիւր ընկեր կը դառնայ ամենալաւը: Ոմանց հետ լաւ է շարժանկար նայելու երթալ, ոմանց հետ սրճարան երթալ, իսկ մէկի ուսին կարելի է լալ ամբողջ գիշերը: Եզրակացութիւնները դուք ըրէք:

9) Ձարմանալի է չունենալ ոեւէ ընկեր: Հաւանաբար այդպէս կ'ազդէ հասարակութիւնը, որ մարդիկ դադարած են իրար հասկնալէ, սակայն գոնէ մէկ նոյն սեռի ընկեր պէտք է անպայման ըլլայ:

10) Միշտ կարելի է աւելի լաւը դառնալ: Ատիկա ե՛ւ գիշերուան կէսին բերուած սենտուիչներն են, ե՛ւ հոգատարութիւնը, ե՛ւ շատ այլ մանրուքներ, որոնք մեծ մասամբ ոչինչ կ'արժեն, բայց կը գնահատուին շատ բարձր

ԼԱԲԱՏԵՍՈՒԹԵԱՆ ԲԱՐԻՔՆԵՐԸ

Երբեմն անձերու կը հանդիպինք, որոնք մեր ինքնավստահութիւնը կ'աւելցնեն եւ լաւատեսութիւն կը ներշնչեն իրենց շուրջիններուն: Միշտ չէ որ մենք կը տեսնենք գաւաթին լեցուն մասը: Յաճախ կը տեսնենք գաւաթին պարապ մասը: Լաւատեսներն են, որ միշտ կը տեսնեն գաւաթին լեցուն մասը: Լաւատեսները շատ մը առաւելութիւններ ունին յոռետեսներուն վրայ: Յիշենք անոնցմէ քանի մը հատը.

1) Լաւատես մարդիկ շատ լաւ ընկերներ են: Անոնց ներկայութիւնը լաւատեսութիւն կը ներշնչէ: Այս

տիպի մարդիկ հազուա դէպքերն կը տառապին սրտանօթային հիւանդութիւններէ, որովհետեւ ընկճուածութենէ հեռու կ'ըլլան:

2) Հարցերուն նայիլ դրական ակնոցով: Հարցերուն ինչպէս որ նայինք, այդպէս ալ կը վարժեցնենք մենք մեզ հարցերը տեսնելու: Եթէ դրական կեցուածք որդեգրենք, առանց ճնշումի կեանք մը կ'ունենանք: Հակառակ պարագային միշտ մտահոգ կ'ըլլանք եւ աւելի ժամանակ կը տրամադրենք ապրելով անց ետի մէջ, իր բոլոր վատ յիշատակներով, փոխանակ վայելելու մեր ներկան:

ՅԻՇՈՂՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՏԵՍԱԿ ՍԸ

Մենք գիտենք, որ կայ յիշողութեան երկու տեսակ: Կարճ յիշողութիւնը մեզի կ'օգնէ կատարելու մեր առօրեայ մտային աշխատանքը, իսկ երկար յիշողութիւնը կը պահէ մեր շատ հին յիշատակները: Ներկայիս հետազոտողներ յայտնաբերած են, թէ մարդկային ուղեղին մէջ գոյութիւն ունի նաեւ «միջակ» յիշողութիւն:

Մինչեւ հիմա գիտնականներ կը կարծէին, որ երբ անձի մը կը ծանօթանանք եւ դարձեալ կը հանդիպինք անոր, այդ յիշողութիւնը

կրկնութեամբ կը փոխանցուի «երկար յիշողութեան», իսկ եթէ չհանդիպինք, այդ նիւթը յիշողութեանէն կը սրբուի: Փաստուեցաւ, որ այս վարկածը այնքան ալ ճիշդ չէ:

Գիտական հետազոտութիւն մը՝ կամաւորներու վրայ կատարուած, փաստեց որ յիշողութիւններ, որոնք կը կարծուէր, թէ անհետացած են այդ մարդոց յիշողութեանէն, կարելի է վերադարձնել տարբեր մեթոտներով: Ուրեմն, ըստ գիտնականներուն, «միջակ տեղողութեան» յիշողութեան տեսակ մըն ալ կայ:

ԲԺՇԿՈՒԹԻՒՆ

Բժշկութիւն բառին արմատը լատիներէն «medicus» բառն է, որ կը նշանակէ բժիշկ կամ բժշկող: Այս գիտութիւնը կը համարուի ամենահին մարդու պատմութեան մէջ: Նա իրամարդը զարգացուցած է բժշկութիւնը դարմանելու համար հիւանդութիւններ, վէրքեր, կոտորուածք եւ այլն:

Առաջին բժիշկները եղած են ցեղախումբին ամենազարգացած մարդիկը, մեհեաններու քուրմերը, որոնք օգտագործած են բոյսեր եւ աղօթքներ՝ բժշկելու համար: Հիւանդութիւնը կը համարուէր աստուածներու պատիժը, ուրեմն մարդիկ պէտք է աղօթէին եւ գոհեր մատուցանէին, որ աստուածներու բարկութենէն զերծ մնան:

Բժշկութիւնը մարդու զարգացումին հետ անցած է շատ մը փուլերէ եւ դարեր ետք վերածուած է գիտութեան մը, որ ունի իր

օրէնքները: Յոյն բժիշկ Հիփոքրատը արձանագրած է երդում մը, որ մինչեւ հիմա կ'օգտագործուի ասպարէզին մէջ, կանոնաւորելու համար բժիշկին գործունէութիւնը: Արդի բժշկութիւնը կ'օգտագործէ հետազոտութիւն՝ հիւանդութիւններ կանխարգիլելու եւ բժշկելու համար:

Ծիներու հետազոտութիւնը նոր ճիւղ մըն է, որ կ'օգտագործուի գտնելու համար հիւանդութիւններուն պատճառը, օգտագործելով մարդու մարմնի ծիներուն քարտէսը: Այս առիթով մեր գնահատանքը կը յայտնենք բոլոր լիբանանցի եւ հայ բժիշկներուն, որոնք իրենց գիտական պաշարով եւ փորձառութեամբ Լիբանանը եւ Հայաստանը դարձուցած են բժշկութեան կեդրոններ, նաեւ իրենց գիտելիքներով օգտակար եղած են աշխարհի բժշկական մշակոյթին:

ՉՈՐՍ ԼԱԻԱԳՈՅՆ ԿԱՃՈՅԱՆՍՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԸՍՏ ԿԱՆԱՆՑ

1) Մեզի համար ամէն ինչ հրաշալի է, ի՞նչ պիտի ընէի առանց քեզի՝ Նման պահերու մենք՝ կիրներս, կը ծաղկինք: Չէ՞ որ տղամարդը այդ պարագային շնորհակալութիւն կը յայտնէ քեզի ո՛չ միայն օգնութեանդ, այլեւ՝ ունակութիւններուդ ու դրական յատկանիշերուդ համար, ատով իսկ ցոյց տալով, որ քու կողքիդ ան աւելի լաւ կը զգայ:

2) Դու լաւագոյն ընկերուհին ես քու ընկերուհիդ համար՝ Այս հաճոյախօսութիւնը, որ կը շեշտէ կնոջ բարութիւնը, երբ ան օգնած է մտերիմներուն, ազգականներուն եւ ընկերուհիներուն, միանգամայն կը ստիպէ անոր գիտակցիլ, որ տղամարդը իրօք կը գնահատէ ու կը սիրէ զինք:

3) Ինծի կը հիացնէ, թէ ինչպէս դու կը պաշտպանես տեսակէտդ՝ Կանայք յաճախ կը գիտակցին, որ աւելորդ զգացմունքայնութիւնը կրնայ վանել տղամարդը: Սակայն երբ քեզի կ'ըսեն, թէ ինչ գեղեցիկ ու համոզիչ էիր արդարացի բարկութեանդ պահուն՝ ատիկա կ'ոգեւորէ ու կը թեւաւորէ քեզ:

4) Մատնայարդարումդ այնքան ներդաշնակ է այս զգեստին՝ Արտաքինի մասին նման հաճոյախօսութիւններէն կիրնը կը հասկնայ, որ իր կողքին ուշադիր ու զգալուն տղամարդ կայ, որ ունակ է նկատելու մանրուքները ու հիանալու անոնցմով: Ատիկա տղամարդու կողմէ ամենահաճելի գովասանքն է:

CARNIVAL of fashion
PROUDLY PRESENTED BY
St. Gregory Ladies Society
Saturday March 24, 2018
Boutique & Social Hour 10:00 AM
Luncheon & Fashion Show 12:00 PM
The Hilton - Universal City
555 Universal Hollywood Dr.
Universal City, CA 91608
Donation \$95
Aida Sethian (626) 695-8013
Yn. Talin Petoyan (626) 616-1535
stgregoryladiesociety@gmail.com

ԾԵՐՈՒԹԵԱՆ ԲՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՐ ԴԱՆԴԱՂԵՑՆՈՂ ՄԹԵՐՔՆԵՐ



Երիտասարդությունը չստիպում է ժամանակը հնարաւոր չափով երկարաձգել մարդու բնական ցանկությունն է: Յատկապէս մենք՝ կիներս, կ'աշխատինք ճիշդ սնուիլ, որպէսզի մարմինը ստանայ օգտակար նիւթերու բաւարար քանակ, կը հետեւինք մեր մաշկի ու մազերու վիճակին, կը փորձենք տեղեկացուած ըլլալ գեղագիտական միջոցներէն, որոնք կ'օգնեն նուազեցնելու ծերութեան ֆիզիքական եւ տեսողական դրսեւորումները:

Գրագէտ ընտրուած սննդակարգը երիտասարդութեան համար մղուող պայքարի հիմնաքարային բաղադրիչներէն է: Մասնագէտները կը կարծեն, որ ամենօգտակարը սնուելու, այսպէս կոչուած, միջերկրածովեան սկզբունքն է: Ծաշտեսականերու մեծ մասի բաղադրութեան մէջ կը մտնեն բանջարեղէն եւ միրգեր, ընկուզեղէն, ձիթաիւղ, այսինքն՝ մթերքներ, որոնք հարուստ են բիոքիմիկալներով, անփոխարինելի ամինաթթուներով, օմեկա-3 եւ B խումբի կենսանիւթերով:

Յաճախ սնուելու այսպիսի եղանակը այնքան ալ մատչելի չէ գուտ գնային առումով, քանի որ, օրինակ, ծովամթերքը աժան չէ, սակայն կան նաեւ ոչ-պակաս օգտակար եւ աւելի քիմքին սովոր համարժէք տարբերակներ, որոնք կ'օգնեն պայքարելու վաղաժամ ծերացման դէմ՝ ոչ պակաս արդիւնաւէտութեամբ:

1) Կանաչ թէյ- Այս ըմպելիքը ունի վառ արտադրատուած առողջացնող յատկութիւններ: Թարմ եփուած կանաչ թէյին մէջ կան նաեւ մեծ քանակով հակաօքսիտաններ, որոնք կը նպաստեն մարմնին՝ ազատուելու թոյներէն եւ կը պայքարին ազատ ուստիքալներու՝ երիտասարդութեան գլխաւոր թշնամիներուն դէմ:

2) Կիտրոնի հիւթ- Կիտրոնի հիւթը բարերար ազդեցութիւն կը գործէ մաշկի, եղունգներու եւ մազերու վիճակին վրայ: Անոնք ձեռք կը բերեն բնական գոյն, կը դառնան հարթ, փափուկ եւ աւելի ամուր: Անոր օգտակար նիւթերը բարերար ազդեցութիւն կը գործեն վերականգնման գործընթացներուն

վրայ եւ կը խթանեն բոլոր հիւսուածքներուն նորացումը դեռ բիւջային մակարդակի մէջ:

3) Սեւ տուրմ- Քաբաոն, որմէ կ'արտադրուի տուրմը, ֆլաւոնոլներու աղբիւր է, որոնք կը նպաստեն արեան մաքրման եւ արեւի ճառագայթներու կործանարար ազդեցութենէն մաշկի պաշտպանութեան: Հակառակ այս մթերքի օգտակարութեան, պէտք չէ մոռնալ, որ անիկա շատ քալորիներ ունի: Եւ ընդհանրապէս, քաղցրի օգտագործման ժամանակ՝ չափի զգացողութեան պահպանումը բնականոն կշիռ ունենալու երաշխիք է:

4) Սունկ- Սունկերու բոլոր տեսակները բուսական մանրաթելերու, որոնք կը լաւացնեն մարսողութիւնը, եւ D կենսանիւթի աղբիւր են, որոնք պակասը հենաշարժողական անդամներու առողջութիւնը պահպանելու համար այնքան անհրաժեշտ քալորամի իւրացման համար խնդիր կրնան ըլլալ:

5) Ընկուզեղէն- Ընկուզի իւրաքանչիւր տեսակի մէջ կայ օմեկա-3, չլազեցած ճարպեր, սպիտակուցներ եւ բիոքիմիկալներ: Անոր փոքրիկ բուռը անգամ օգտակար ու սննդարար ուտելիք է, որ հիանալի կերպով թէ՛ կը յազեցնէ քաղցը, եւ թէ՛ մարմինը կ'ապահովէ լրացուցիչ ուժանիւթով:

6) Զիթաիւղ- Ասիկա բուսաիւղերու լաւագոյն տարատեսակն է, որմով արժէ յազեցնել օրուան սննդակարգը: Աւանդական ճաշատեսակներու մեծ մասին մէջ այս մթերքին ներառումը կը նպաստէ քոլեսթերոլի մակարդակի բնականոնացման, եւ իբրեւ արդիւնք՝ կը լաւացնէ սիրտ-անոթային համակարգի վիճակն ու գործառոյթները:

7) Լոլիկ- Լիքերենները, որոնցմով հարուստ է լոլիկը, ուռուցքային հիւանդութիւններու կանխարգիւման բնական միջոց են: Բացի այդ, մասնագէտներու կարծիքով, ասիկա այն քիչ մթերքներէն է, որոնք օգտագործումէն հասած օգուտը կը մեծնայ անոր ջերմային մշակումէն ետք:

8) Բրբուկ- Կաղամբի այս տեսակի գլխաւոր առաւելութիւննէ-

րէն են բուսական բիոքիմիկալները, կենսանիւթերու եւ հակաօքսիտանիւթերու բարձր պարունակութիւնը: Բրբուկի կանոնաւոր գործածութիւնը սննդակարգի մէջ, կը նպաստէ աղեստամոքսային համակարգի կենսագործունէութեան բնականոնացման, ինչպէս նաեւ թոյներու՝ մարմինէն արդիւնաւէտ դուրսբերման:

9) Մրգային մածուց- Կաթնամթերքի բոլոր տեսակները քալիումի անփոխարինելի աղբիւր են, իսկ նոյնինքն քալիումը կ'օգնէ ամրացնելու ոսկրային հիւսուածքները: Մրգային մածուցը, իր հերթին, հարուստ է սպիտակուցներու եւ D կենսանիւթի բաւարար քանակով: Այս մթերքը հիանալի կերպով կը համադրուի միրգի հետ, իսկ կաթնամթերքային պաթեթիւններու առկայութիւնը կը նպաստէ մարսողութեան ընթացքի լաւացման ու կը խթանէ նիւթափոխանակութիւնը:

10) Նուռ- Նուռը շատ օգտակար է սրտի բնականոն կենսագործունէութեան համար, ինչպէս նաեւ բարերար ազդեցութիւն կը գործէ մաշկի վիճակին վրայ: Նուռի շնորհիւ կարելի է մաշկին վերադարձնել հարթութիւնն ու փափուկութիւնը:

11) Սպանախ- Սպանախի մէջ եղած մեծ քանակով նիւթերը նուազագոյնի կը հասցնեն մաշկի՝ արեւու ճառագայթներու հետ տեսական չիման հետեւանքով յառաջացած վնասուածքները: Պեթա-քարոթիւնը եւ լիւթէինը, որոնցմով նոյնպէս հարուստ է այս մթերքը, կը նպաստեն հիւսուածքներու առաձգականութեան վերականգնման:

12) Քաղցր պղպեղ- Գոյութիւն ունին շատ հիանալի բաղադրատոմսեր, որոնց մէջ իբրեւ բաղադրիչ հանդէս կու գայ քաղցր

պղպեղը: C կենսանիւթի բարձր պարունակութիւնը կը նպաստէ դիմադրողականութեան ամրացման, հիւսուածքներու վերականգնման արագացման, սպիտակուցներու իւրացման բնականոնացման, իսկ հակաօքսիտանները ուռուցքներու հիանալի կանխարգելիչներ են:

13) Քրքուց- Այս համեմունքի կազմին մէջ մտնող քրքուցիւր կը խոչընդոտէ այլասերիչ ընթացքներու զարգացման բիոքիմիկալներու մէջ եւ հակասօրէն կը նուազեցնէ քաղցկեղով, ալզհէյմըրի հիւանդութեամբ հիւանդանալու վտանգը, սրտի եւ դիմադրողական համակարգի աշխատանքի խնդիրներու առաջացումը:

14) Ստեպլին- Այս բանջարեղէնը հարուստ է A կենսանիւթով: Մնուդի մէջ ստեպլինի յաճախակի օգտագործումը բարենպաստ ազդեցութիւն կը գործէ մաշկի, մազերու եւ եղունգներու առողջութեան վրայ, կը նպաստէ տեսողութեան սրացման, ինչպէս նաեւ կը հանդիսանայ քաղցկեղի լրացուցիչ կանխարգելիչ:

15) Վարսակի փաթիլներ- Վարսակի օգտակար յատկութիւնները դժուար է գերազանահատել: Բուսական բիոքիմիկալներու լորձային զանգուածի ձեւաւորման բնական ունակութիւնը կը լաւացնեն աղիքներուն շարժը: Վարսակի հիմքով մթերքները նաեւ լաւ կ'ազդեն մաշկին վրայ՝ զայն դարձնելով աւելի մաքուր, թարմ, ու տալով անոր առողջ երանգ:

Երիտասարդութեան զաղտնիքները պարզ են եւ մատչելի:

Անոնց թիւին կը պատկանին հաւասարակշռուած սնունդը, չափաւոր ֆիզիքական ծանրաբեռնութիւնը, մարմնի խնամքն ու դրական տրամադրութեամբ իրենց: Պատրաստեց՝ ՆԱՐԻՆԷ Ն.

GARNI

Nourish your hair with natural products

The Science of Hair Growth & Loss: All your hair, only about 10% of the hair on your scalp is growing and ready to fall out. The rest is in the 'resting' phase. The cycle repeats every 3-6 months. This is why you lose hair. GARNI is the answer.

2 Month Supply 2.7 fl. oz. / 80 ml

www.GarniUSA.com
Pasadena, CA 91102, USA

**Ջօրացիւք
Օժանդակէնք
Փրկէնք**

Syrian Armenian Relief Fund
P. O. Box 1948
Glendale, CA 91209-1948

www.syrianarmenianreliefund.org

f

ՓՈՒՍԱՆ ԾԱՂԿԵՊԱԿԻ ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐՄԵՆԱԿ ՊՈՅԱՄԵԱՆԻ մահուան տխուր առիթով փոխան ծաղկեպսակի հետեւեալ նուիրատուութիւնները եղած են «Մասիս» շաբաթաթերթին:

Տէր եւ Տիկ. Խաչիկ եւ Ժենիա Քէշիշեան	\$100
Տէր եւ Տիկ. Յովհաննէս եւ Մէրի Գորգուսեան	\$100
Հ.Մ.Մ.ի վարչութիւն	\$100
Տէր եւ Տիկ. Պետրոս եւ Լենա Խոտանեան	\$100
Տէր եւ Տիկ. Ժիրայր եւ Սիմա Կիրակոսեան	\$100
Sahara Restaurant Գրիգորեան Եղբայրներ	\$200
Տէր եւ Տիկ. Կարօ եւ Անի Պէքարեան	\$100
Տէր եւ Տիկ. Յարութ եւ Ռոպին Տէր Դաւիթեան	\$100
Տէր եւ Տիկ. Գրիգոր Խոտանեան	\$100
Տօքթ. եւ Տիկ. Արշակ Գազանճեան	\$100
Տէր եւ Տիկ. Գաբրիէլ Մոլոյեան	\$100
Տէր եւ Տիկ. Վահէ Աջապահեան	\$100

Յիշատակելի Միջոցառումներ

Շարունակուած էջ 7-էն

վուրդի արդար իրաւունքներու համար խիզախ մարտնչող եւ թէ որպէս Արցախի ազատագրական պայքարի անձնուէր մարտիկ, ինչպէս նաեւ Հայրենիք Միութեան Հայաստանի եւ յատկապէս Արցախի շինարարական ծրագիրներու կամաւոր աջակից:

Ներկաները յուզուածով դիտե-

ցին Սարգիս Հացպանեանի կեանքի ուղիին եւ վերջին շրջանի հիւանդանոցային վիճակի մասին յուզախառն տեսարկի մը:

Սոյն յիշատակելի սգահանդէսն աւարտեցաւ Տէր Սերովբէի «Պահպանիչ» աղօթքով:

Գնահատելի միջոցառում մը արժանաւոր հայու մը համար, որուն համար կը շնորհաւորենք նախաձեռնողները:

«ՅՈՒՇԱՐՁԱՆ ԶԱՅՐԻԿԻՍ»

Շարունակուած էջ 13-էն

Ախ, դաշոյնուած իմ յուշեր, Լուսինն անգամ կը սոսկար Չարագուշակ այն գիշեր:

Բայց հայրիկս դարձաւ յուշ՝ էն տանելն էր, որ տարան, Այն օրուանից իմ անուշ Արցունքներն էլ թոյն դառան:

Գիրքի կողքին, Յ. Շիրազի աւագորդուցն՝ քանդակագործ Արաչի գործին լուսանկարն է՝ «Թաղէնոս պապը», որ խիստ նման է հատորի հեղինակին: Հատորին նկարիչն է վանանդ Շիրազ: Գիրքը լոյս տեսած է Կիւմրիի քաղաքապետ, Ազգային ժողովի նախկին պատգամաւոր Սամուէլ Բալասանեանի հոգածութեամբ: Հրատարակութեան մասնակցած է Կիւմրիի Յ. Շիրազի յուշատուն-թանգարանը:

Հատորը կը պարփակէ շուրջ 200 քերթուածներ: Վերջին բանաստեղծութիւնը՝ «Կէտարեայ Նոր Հայաստանին» կը վերջանայ այսպէս. Իրաւ... հսկայ հօրից ծնուածն՝ ինչպէ՞ս մնայ հագիւ մի բուռ, իմ Հայաստան, մի աչքդ՝ լոյս, մէկդ՝ լաց է արտասուալուռ: Մի՞թէ Մասիս հօրից ծնուած՝ հագիւ մի Սիս պիտի մնաս, Ախ, երբ պիտի գէթ Սեւանից մինչ վանայ ծով՝ հսկայանաս:

Վեր սանդուղքուես Արագածով՝ մինչեւ Մասիս վեր բարձրանաս:

«Մայրամուտ է Այս Դարը» քերթուածով իր հօրը կը թուէ բարքերու այն այլասերուածները որոնք պատահեցան նոր օրերուն. - Հա՛յր իմ, եկ տես, ինչ վշտի ջաղացաբարեմ դարձնում, Ներսից աշխարհն յուզայուեց, լոկ դրսից է մեղրա-

ծոր:

էլ հարսները կեսրայրի ոտքերը չեն լուանում, էլ չեն պաշտում որդիք էլ տաճար անունն հօր ու մօր Հագարից մէկն է հիմա եօթը որդով մայրանում, Մայրամուտ են սրտերը եւ աւելի՛ հայրամուտ:

Դեռ հարսանիք չմտած՝ հարսանիքուծ են գաղտնի, Ծաղրուծ է հայրասուրբ վաղնջական համաւոր, Խառնակուծ են խելայեղ, էլ սրբուհի չեն գտնի, Մայրամուտ են վարդերը եւ ցաւալի՛ հայրամուտ:

Հայոց ոգին թեւաթափ դեռ արծիւ է վանդակուած, (վանդակողն է գլխավեհ, վանդակուածն է գլխիկոր), Թագադրուծ է բարտին, կաղնիս դեռ ցած է ճկուած, Մայրամուտ է այս դարը եւ առաւել՝ հայրամուտ:

Սոխակն է ճորտն անգղի, լոկ մեղու չէ աշխարհը, էլ բանաստեղծն արքան չէ արքաները նորաւոր, էլ կոյսի սուրբ շրթունք չէ տաճարում էլ նշխարը: Մայրամուտ է աշխարհը եւ առաւել՝ հայրամուտ:

Ան կ'եզրակացնէ. - Մայրամուտ է Աստուած էլ, եւ յաւիտեան՝ հայրամուտ:

Հետաքրքրական դիտարկում մը. 1968-ին, երբ «Յուշարձան Մայրիկի» հատորը հրատարակուեցաւ, 50 հազար տպաքանակով էր, որ ըստ բանաստեղծ, գրող Գուրգէն Մահարիի «Քաղցի տարիներին մատնաքաշ հացի արագութեամբ սպառուած» է: Իսկ 2017-ին հրատարակուած «Յուշարձան Հայրիկի»-ին տպաքանակը ընդամենը 500 է...: Մօր եւ հօր գատողութեան վերագրենք, թէ՞ ժամանակներն են այսպիսին՝ հայրամուտ է, հայրամուտ...

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Շարունակուած էջ 14-էն

յիշատակը», «մի՛ հզօրացնէք թրքական բանակը», «ամօ՛թ այն հայերուն որոնք թրքական ապրանք կը գնեն», «քաջալերենք հայկական արտագրութիւնները», «ամօթ նպարավաճառին» եւ այլն: Եւ այս պատառները հայերէնով, անգլերէնով եւ սպաներէնով պէտք է պատրաստուին:

Եթէ որեւէ կազմակերպութիւն կամ առեւտրական հաստատութիւն Ափրիկո-ամերիկացիներուն շահերուն կամ պատիւին դպչի, շուտով «պօքօք»ի կեւենթարկեն այդ հաստատութեան ապրանքները: Մենք անոնց չա՛փ ալ

չկանք: Կ'երեւայ մենք շատ նրբացած-բարեկրթուած ենք ...:

Մեր քաղաքական կուսակցութիւններուն, եկեղեցականներուն, միութենականներուն, խմբագիրներուն, մտաւորականներուն, հայկական դպրոցներու տնօրէններուն, հայերէնի ուսուցիչներուն, երիտասարդական-մարզական կազմակերպութիւններուն, եւ բոլորին պարտականութիւնն է բռնցկաւորուիլ եւ յաջողեցնել այս շարժումը:

Մեր նահատակներուն յիշատակը յարգելը գործնականապէս պէտք է ցոյց տանք:

Դժուա՞ր է: Կրնայ ըլլալ: Բայց ԿԱՐԵԼԻ՛ է:

ԳԵՈՐԳ Ե. ԿԱԹՈՂԻԿՈՍԵՆ ԵՏՔ

Շարունակուած էջ 15-էն

ցումները Սուրբ Կաթողիկէ եւ Սուրբ Լուսաւորիչ եկեղեցիներու նկատմամբ: Հոս սակայն չէր աւարտեր յիշեալ եկեղեցիներուն ճակատագիրը, գէթ Կաթողիկէ եկեղեցիի պարագային որ անխղճօրէն իր վախճանը գտաւ բռնի քանդումով՝ 1937-ի Մայիսին: Կաթողիկէ եկեղեցին եւս հին դարերէն կուզար որուն հնագէտներ 7-րդ դարը կը ճշդէին: Շէնքին վերակառուցումը տեղի ունեցած է 10-11րդ դարերուն, եւ «գարմանալիօն մինչեւ այժմ մնացեր էր նոյնութեամբ» դիմանալով 1679 թուականի Երեւանի մեծ երկրաշարժին:

Ճարտարապետ

Կարօ Ղաֆադարեան

Կաթողիկէ եկեղեցու քանդումը կանխելու եւ անոր պատմական ու հնագիտական արժէքը ցոյց տալու համար յայտնի ճարտարապետ պատմագէտ Կարօ Ղաֆադարեան կը գրէր թէ 1936-ի վերջերը Երեւան քաղաքի նոր յատակագծի բարեփոխութեան հետեւանքով կը քանդուէր եկեղեցին, եւ հակառակ եղած բազմաթիւ բողոքներուն կարելի չէր եղած իշխանութեանց ծրագրէն դուրս ձգել տալ եկեղեցու քանդումը, որուն ինք Ղաֆա-

դարեան դժբախտ սկանաւտեան էր եղած «հետեւելով քանդումներին եւ ապահովել բեկորները եւ պահպանել զանոնք»: Եկեղեցու քանդումը սկսած է 1936 Դեկտեմբերին եւ աւարտած յաջորդ տարուան Մարտին, որ յատուկ մտադրութեամբ երկար տեւեց «յաճախակի մեր գրած արգելքների պատճառով»:

Գիտնական

Աշխարհաբեկ Քալանթարեան

Իր բողոքը բարձրացուցած է նաեւ գիտնական Ա. Քալանթարեան յիշեցնելով որ 17-րդ դարու այդ եկեղեցու գմբէթին տակ կը գտնուէր կարեւոր եւ ընդարձակ արձանագրութիւն մը, որուն հետ միասին ամբողջ տաճարը հնագոյն պատմութեան եւ հայ արուեստի կոթող մըն էր, «ուստի եւ անթույլատրելի է նրանց ոչնչացումը այս ձեւով»: Նոյն տարին պետական որոշումով փակուեցան Երեւանի Ս. Սարգիս եւ Լենինականի միակ գործօն Ս. Աստուածածին եկեղեցիները: Երեւանի մէջ մնացին Ս. Զօրավար եւ Ս. Յովհաննէս գործօն եկեղեցիները: Եկեղեցիներէն ետք կառավարութեան աչքին հեշտ չէին երեւար Հայաստանի հնագրեան վանքերը գորս եւս բռնի կերպով պիտի փակէին:

HARRY THE HANDYMAN SERVICES

**Air Conditioning Repair
Plumbing & Roofing
Water & Gas Pipes • Fencing & Painting
Iron Work Repair • Electrical Job**

Email: haroutig007@gmail.com

Dependable • Reliable • Fast Work

CALL HARRY

818.219.3314

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ

1060 North Allen Ave Pasadena, CA 91104

Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով հեռաձայնել՝ (626) 398-0506

ՎԱՐՁՈՒ ՄՐԱԸ

ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԸՈԳԻ ԸԱՄԱՐ) ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104

ԸՆՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

ՄԱՐԶԱԿԱՆ

Մեսիի Կարիերայի 600-րդ Կոլը Յաղթական էր «Աթլետիկոյի» Դեմ Խաղում



Սպանիայի առաջնութեան 27-րդ տուրում առաջատար «Բարսելոնան» սեփական դաշտում նուազագույն հաշուով առաելութեան հասաւ երկրորդ տեղում գտնուող Մադրիդի «Աթլետիկոյի» նկատմամբ:

Խաղի միակ կոլը 26-րդ րոպէին խփեց արժենթինացի յարձակուող Լիոնել Մեսին, որը խփեց կարիերայի 600-րդ կոլը եւ Սպանիայի ընթացիկ առաջնութիւնում 5-րդ անգամ աչքի ընկաւ տուգանային հարուածով: Նա 24 կոլով գլխավորում է ումբարկուներէ ցուցակը:

600 կոլի հեղինակ դառնալու համար 30-ամեայ Մեսիից պահանջուեց 747 հանդիպում: 539 կոլ նա խփել է «Բարսելոնայում», եւս 61 անգամ աչքի է ընկել Արժենթինայի ազգային հաւաքականում:

«Բարսելոնան» մրցաշարային աղիւսակը գլխավորում է 69 միաւորով եւ արդէն 8 միաւոր է գերազանցում «Աթլետիկոյին»: Երրորդ տեղում գտնուող Մադրիդի «Ռեալն» ունի 54 միաւոր:

«Ռեալի» Յաղթանակը, Ռոնալդուի Դուբլն ու 300-րդ Կոլը Պրիմերայում

Սպանիայի առաջնութեան 27-րդ տուրում «Ռեալը» Մադրիդում մրցեց «Խետաֆէի» հետ: Ֆրանսացի Ջիւնեդին Ջիդանի գլխավորած թիմն առաելութեան հասաւ 3:1 հաշուով: Հաշիւը բացեց ուելսի Գարեթ Բեյլը, որը դարձաւ Սպանիայի առաջնութիւններում ամենաշատ (117) հանդիպում անցկացրած բրիտանացի ֆուտպոլիստը: Նա գերազանցեց Մադրիդի «Ռեալի» նախկին խաղացող, անգլիացի Դեւիդ Բեքհեմի ռեկորդը:

Այնուհետեւ դուբլի հեղինակ դարձաւ պորտուգալացի յարձակուող Կրիշտիանու Ռոնալդուն, որի առաջին կոլը իր համար 300-րդն էր Սպանիայի առաջնութիւններում:

«Բարսելոնայի» արժենտինացի յարձակուող Լիոնել Մեսիից յետոյ Ռոնալդուն դարձաւ երկրորդ ֆուտպոլիստը, որին յաջողում է հատել 300 կոլի սահմանագիծը Պրիմերայում:

«Խետաֆեն» 47-րդ րոպէից հանդէս էր գալիս 10 ֆուտպոլիստներով: Երկրորդ դեղին քարտի համար հեռացուեց ֆրանսացի յարձակուող Լոիկ Ռեմին:

Խոսեպ Գուարդիոլագ Եւս 4 Յաղթանակ Եւ մենք Ախոյեան ենք

«Մանչեսթեր Սիթիի» գլխավոր մարզիչ Խոսեպ Գուարդիոլան մեկնաբանել է անգլիական Պրեմիեր լիգայի 29-րդ տուրում Լոնտոնի «Չելսիի» նկատմամբ տնային յաղթանակը նուազագույն հաշուով:



«Այս խաղում յաղթելը չափազանց կարեւոր էր: Մա եւս մէկ քայլ էր դէպի մեր նպատակը: Մեզ 4 յաղթանակ է հարկաւոր ախոյեանութեան համար, եւ դա մեր ձեռքում է: Եթէ առաջիկայ խաղերում եւս ցուցադրենք այսպիսի խաղ, ապա կը դառնանք ախոյեան:

Մենք յաղթեցինք ուժեղ թիմի, որը դեռ գործող ախոյեանի կարգավիճակում է: Այս խաղում մեր թիմն ամեն ինչ ճիշտ կատարեց», - մարզիչի խօսքը մէջբերում է BBC-ն:

Յիշեցնենք, որ այդ յաղթանակից յետոյ «Մանչեսթեր Սիթին» վաստակել էր 78 միաւոր եւ 18 միաւոր առաջ անցել երկրորդ տեղ բարձրացած «Լիւերպոլից»:

«Լիվերպոլի» Վստահ Յաղթանակն Ու Ընթացիկ Երկրորդ Տեղը

Անգլիայի առաջնութեան 29-րդ տուրում «Լիվերպոլը» տանը 2:0 հաշուով պարտութեան մատնեց «Նիւքասլին»:

Աչքի ընկան եգիպտացի կիսապաշտպան Մոհամեդ Սալահը եւ սենեգալցի յարձակուող Սադիո Մանեն:

Սադիո Մանէի կոլը 200-րդն էր «Լիւերպոլի» համար գերմանացի մարզիչ Ֆուրգեն Կլոպի գլխավորութեամբ:

«Լիվերպոլը» 60 միաւորով բարձրացաւ երկրորդ տեղ եւ 1 միաւոր առաջ է «Մանչեսթեր Եունայթեդից»:

Դաւիդէ Աստորին Մահացել Է Սրտի Անսպասելի Կանգից

Իտալական «Ֆիորենտինայի» աւագ Դաւիդէ Աստորին 31 տարեկանում մահացել է սրտի կանգի հետեւանքով: Այդ մասին յայտնել է Իտալիայի Ուղինէ քաղաքի դատախազ Անտոնիո Դէ Նիկոլոն:



«Մենք կարծում ենք, որ այդ իրավիճակում խաղացողը մահացել է սրտի անսպասելի կանգից: Տարօրինակ է, որ դատելի է ունեցել պրոֆեսիոնալի հետ, որը յաճախ բուժգնում է անցել եւ չի ունեցել խնդիրներ», - Դէ Նիկոլոյի խօսքը մէջբերում է Football Italia-ն:

Յիշեցնենք, որ Իտալացի պաշտպանին Ուղինէ քաղաքում մահացած էին յայտնաբերել գտնուող հիւրանոցային համարում: «Ֆիորենտինան» Ուղինէ էր մեկնել «Ուղինեզի» դէմ արտագնայ խաղի համար: Ենթադրում է, որ Աստորին մահացել է քնած ժամանակ:

Կարիերայի ընթացքում Աստորին հանդէս է եկել նաեւ Իտալական «Կալիարիում» եւ «Ռոմայում», իսկ Իտալիայի ազգային հաւաքականի կազմում անցկացրել է 14 հանդիպում եւ խփել մէկ կոլ:

Դէպքի պատճառով յետաձգուել էին Իտալիայի առաջնութիւնում Մարտի 4-ին նախատեսուած բոլոր խաղերը:

Եուրա Մովսիսեանը Յեռացել Է Ամերիկեան «Ռեալ Սոլթ Լեյքից»

Ֆուտպոլի Հայաստանի հաւաքականի նախկին յարձակուող Եուրա Մովսիսեանը հեռացել է ամերիկեան «Ռեալ Սոլթ Լեյքից»:



Mlsoccer.com-ի համաձայն՝ կողմերը պայմանագիրը խզել են երկուսի համաձայնութեամբ:

Յիշեցնենք, որ աւելի վաղ 30-ամեայ յարձակուողը յայտարարել էր, որ մտադիր է համակերպուել ամերիկեան թիմի պահեստային խաղացողի կարգավիճակի հետ եւ ունի առաջարկներ այլ ակումբներին: Մովսիսեանը 2016-ին Մոսկուայի «Սպարտակից» էր տեղափոխուել «Ռեալ Սոլթ Լեյքը», որի կազմում խաղացել է նաեւ 2007-2009-ը:

«Արսենալը» Կրեց Չորրորդ Անընդմէջ Պարտութիւնը

Անգլիական Պրեմիեր լիգայի 29-րդ տուրում Լոնտոնի «Արսենալը» հիւրընկալուելիս 1:2 հաշուով պարտուեց «Բրայթօնին»:

Հայաստանի հաւաքականի 29-ամեայ կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը խաղը սկսել էր Արսէն Վեգնիերի գլխավորած թիմի մեկնարկային կազմում:

Դաշտի տէրերն արագ կոլ խփեցին անկիւնային հարուածի խաղարկման արդիւնքում, իսկ 26-րդ րոպէին նաեւ կրկնապատկեցին հաշիւը: Առաջին խաղակէստում «Արսենալն» աւելի շատ էր վերահսկում գնդակը, սակայն չէր կարողանում կազմակերպել վտանգաւոր գրոհներ: Խաղակէսի վերջնամասում լոնդոնցիները մեծացրին ճնշումը եւ 43-րդ րոպէին կրճատեցին հաշիւը գաբոնցի յարձակուող Պիեր-էմերիկ Օբամեյանգի կոլի շնորհիւ:

Երկրորդ խաղակէստում «Արսենալն» ունէր առաելութիւն, որը կոլի վերածել չյաջողուեց: Հենրիխ Մխիթարեանը փոխարինուեց 83-րդ րոպէին:

Բոլոր մրցաշարերում լոնտոնեան ակումբը կրեց չորրորդ անընդմէջ պարտութիւնը, իսկ Պրեմիեր լիգայում՝ երրորդ, եւ 45 միաւորով մնաց 6-րդ տեղում: «Բրայթօնը» 34 միաւորով 10-րդն է:

Նեյմարը Յաջողութեամբ Վիրահատուել Է Քայրենիքում

Ֆրանսական ՊՍԺ-ի եւ Պրագիլիայի հաւաքականի յարձակուող Նեյմարը յաջողութեամբ վիրահատուել է հայրենիքում, հաղորդում է Պրագիլիայի ֆուտպոլի կոնֆեդերացիայի մամուլի ծառայութիւնը:

Սպասում է, որ 26-ամեայ ֆուտպոլիստը խաղադաշտ կը վերադառնայ երեք ամիս յետոյ եւ պատրաստ կը լինի Յունիս-Յուլիսին Ռուսաստանում կայանալիք աշխարհի առաջնութեանը:

Յիշեցնենք, որ Նեյմարը ոտնաթաթի վնասուածք էր ստացել Փետրուարի 25-ին տեղի ունեցած Ֆրանսայի առաջնութեան 27-րդ տուրի խաղում «Մարսելի» դէմ (3:0):